UNITED NATIONS
HUMAN RIGHTS
OFFICE OF THE HIGH COMMISSIONER

HELSINKI CITIZENS' ASSEMBLY

ԶԵԿՈՒՅՑ

Անհայտ կորած անձանց և նրանց ընտանիքների իրավունքների պաշտպանության վիճակը Հայաստանի Հանրապետությունում

ՎԱՆԱՁՈՐ 2025

Հեղինակային խումբ՝

Արթուր Սաքունց

Նազելի Մովսեսյան

Անի Չատինյան

Մարիամ Անտոնյան

Սույն զեկույցը պատրաստվել է Միավորված Ազգերի Կազմակերպության ֆինանսական աջակցությամբ: Սույն զեկույցի մեջ արտահայտված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները հեղինակներինն են եւ հնարավոր է, որ չհամապատասխանեն ֆինանսավորող կազմակերպության տեսակետներին:

ՆԱԽԱԲԱՆ



Ղարաբաղյան առաջին պատերազմից հետո ավելի քան 30 տարի անց, 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի սանձազերծած 44-օրյա պատերազմից շուրջ 5 տարի անց անհայտ կորած զինծառայողների ծնողները, հարազատները գտնվում են անորոշության մեջ:

Լեռնային Ղարաբաղի (ԼՂ) հակամարտության հետեւանքով 1988-2005 թթ. անհայտ կորած է համարվում 1160 անձ, որից 437–ը Հայաստանից, 723–ը՝ Լեռնային Ղարաբաղից: Հայաստանից անհայտ կորած 437 անձանցից 224-ը՝ զինծառայող է, 213-ը՝ խաղաղ բնակիչ, իսկ ԼՂ-ից անհայտ կորած 723 անձանցից 250-ը՝ զինծառայող է, 473-ը՝ խաղաղ բնակիչ:

2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի սանձազերծած 44-օրյա պատերազմական գործողություններից հետո անհայտ կորած անձանց թիվը, ըստ

ՀՀ քննչական կոմիտեի տվյալների կազմում է 195, որից 175-ը՝ զինծառայող, 20-ը՝ քաղաքացիական անձ:

44-օրյա պատերազմի ընթացքում և դրանից հետո պետական մարմինների և համապատասխան կառույցների կողմից իրականացված գործողությունները՝ ուղղված անհայտ կորած անձանց գտնվելու վայրն ու ճակատագիրը պարզելուն, վերջիններիս ընտանիքների կողմից գնահատվում են ոչ արդյունավետ:

2020 թ. 44-օրյա պատերազմի օրերին ՀՔԱ Վանաձորի գրասենյակը *(այսուհետ նաեւ՝ Կազմակերպություն)*, ելնելով այն փաստից, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը կամ որևէ այլ պետական կառույց չի վարում վիճակագրություն եւ չի հավաքագրում փաստեր ու տեղեկություններ պատերազմական գործողությունների հետեւանքով անհայտ կորած անձանց մասին, սկսեց հավաքագրել տվյալներ այն անձանց մասին, ովքեր մասնակցում էին պատերազմական գործողություններին եւ ում գտնվելու վայրի ու ճակատագրի մասին հարազատները տեղեկություն չունեն: Կազմակերպության աշխատակիցները ներգրավվեցին շուրջօրյա ռեժիմով քաղաքացիներից զանգերի ընդունման գործընթացին: Տեղեկատվության հավաքագրման նպատակն անհայտ կորածների վերաբերյալ մեկ միասնական տեղեկատվական բազա ստեղծելն ու այն ՀՀ պաշտպանության նախարարությանը տրամադրելն էր՝ նպատակ ունենալով աջակցել անհայտ կորած անձանց վերաբերյալ տեղեկությունների տրամադրմանը նրանց հարազատներին:

Հետագայում՝ 2021 թ. հուլիս-սեպտեմբեր ամիսներին ՀՔԱ Վանաձորի գրասենյակն իրականացրեց տեղեկատվության հավաքագարում ՀՀ բոլոր մարզերում եւ Երեւան քաղաքում բնակվող 104 անհայտ կորածների ընտանիքների հետ հանդիպումների միջոցով: Հանդիպումների արդյունքում ՀՔԱ Վանաձորի գրասնեյակն արձանագրեց անհայտ կորածների ընտանիքների խնդիրները տարբեր ոլորտներում, որոնք տարիներ շարունակ մինչ օրս առկա են: Արձանագրված խնդիրներն ամփոփվեցին «2020 թ. 44-օրյա պատերազմական գործողությունների

ընթացքում անհայտ կորած անձանց եւ նրանց ընտանիքի անդամների իրավունքների վիճակը» զեկույցում[1]: Արձանագրված խնդիրների մեծ մասը մինչ այժմ մնում են չլուծված: Մասնավորապես՝



- Պետությունը արդյունավետ կերպով չի ապահովում անհայտ կորած անձանց ընտանիքների իրենց հարազատի գտնվելու վայրի եւ ճակատագրի մասին տեղեկություն ստանալու իրավունքը:
- Պատերազմական գործողությունների ընթացքում եւ հետպատերազմական շրջանում պետական տարբեր մարմիններ իրականացրել են միեւնույն լիազորությունները եւ գործառույթները, ինչի պատճառով անհայտ կորած անձանց ընտանիքների համար որոշակի չէ, թե որ մարմնին կարող են դիմել տարբեր հարցերով:



- Անհայտ կորած անձանց վերաբերյալ առկա չէ տեղեկատվության կառավարման մեկ միասնական համակարգ:
- Անհայտ կորած անձանց ընտանիքների հետ տարվող աշխատանքների համար պատասխանատու մարմինները չունեն համապատասխան կարողություններ եւ հմտություններ, պատրաստված անձնակազմ:
- ԴՆԹ նմուշառման արդյունքում նույնականացումը հաստատող կամ հերքող արդյունքների վերաբերյալ տեղեկությունները ստացվում են ոչ ողջամիտ ժամկետներում, արդյունքների մասին ընտանիքները տեղեկություններ ստանում են տարբեր մարմիններից, ինչն էլ իր հերթին

[1] 2020 թ. 44-օրյա պատերազմական գործողությունների ընթացքում անհայտ կորած անձանց եւ նրանց ընտանիքի անդամների իրավունքների վիճակը. զեկույց | ՀՔԱՎ

առաջացնում է անկանխատեսելիություն եւ անվստահություն գործընթացի նկատմամբ:

- Անվստահություն են առաջացնում նաեւ անհայտ կորածի եւ ընտանիքներին հանձնված մարմնի կամ մասունքների միջեւ կառուցվածքային տարբերությունները:
- Քննչական մարմինները զինծառայողների հարազատներին չեն տրամադրում էլեկտրոֆորեոգրամա հետազոտության արդյունքները: Փոխարենը, ԴՆԹ նմուշառման արդյունքներին զինծառայողների հարազատները ծանոթանում են միայն դատաբժշկական գիտագործնական կենտրոնի փորձագիտական եզրակացությամբ: Այսինքն հարազատներին չի տրվում ԴՆԹ հետազոտության բնօրինակ փաստաթուղթը, փոխարենը՝ հակիրճագիր քաղվածքը:
- Քննչական մարմինները որոշ դեպքերում թյուրիմացություն են որակում, երբ անհայտ կորածի և ծնողի ԴՆԹ պատասխանները համընկնելուց հետո ծնողների միջոցով արված ստուգիչ գործողությունները ցույց են տալիս, որ տրված տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը: Օրինակ, մեկ դեպքում զինծառայողի հորը հարցրել են իր կնոջ ազգանունը և վերջինս այլ ազգանուն է նշել: Արդյունքում զինծառայողի հորը հայտնել են, որ հենց նույն ազգանվամբ ծնողի ԴՆԹ նմուշառումը համընկել է զոհված զինծառայողներից մեկի ԴՆԹ նմուշառմանը՝ այդ կերպ փորձելով անհայտ կորած զինծառայողների ընտանիքներին համոզել, որ նմուշը իրենց անհայտ կորած հարազատինն է:
- Անհայտ կորած զինծառայողների ընտանիքներին մտահոգում է այն հանգամանքը, որ ԴՆԹ նմուշառումների համընկնման արդյունքների օբյեկտիվությունը կասկածի տակ դնելուց և դրանց անճշտությունը ապացուցելուց հետո թվային որևէ փոփոխություն չի կատարվում պաշտոնապես ներկայացվող թվային տվյալներում: Այսինքն, պաշտոնապես ներկայացվող անհայտ կորածների թիվը մնում է անփոփոխ նույնիսկ այն

պարագայում, երբ կրկնակի ԴՆԹ հետազոտությամբ ժխտվում է զինծառայողի մահացած լինելու վարկածը: Միաժամանակ, անհայտ կորած զինծառայողների հարազատները նշում են, որ որպես անհայտ կորած ներկայացվող 195 անձանցից բացի, ևս 85 զինծառայողների հարազատներ վստահ են, որ չնայած առկա է ԴՆԹ նմուշառումների համընկնում, սակայն ներկայացված մարմինները կամ մասունքները չեն համապատասխանում անհայտ կորած զինծառայողների որոշ հատկանիշների, օրինակ՝ մարմնակազմությանը: Նշված 85 անհայտ կորած զինծառայողներին մահացած համարելով՝ պետությունը փաստացի համարում է վերջիններիս ճակատագրի հանդեպ իր պատասխանատվությունն ավարտված, և նրանց մահացած համարելով՝ կառույցներին չի ներկայացնում տվյալներ: Ելնելով այս հանգամանքից, անհայտ կորածների հարազատները պնդում են, որ 2020 թ. պատերազմական գործողությունների հետևանքով անհայտ կորածների թիվն ավելին է, քան պաշտոնապես ներկայացվող 195-ը:

- Պատերազմի անմիջական եւ ուղղակի ազդեցությունը կրած անհայտ կորած անձանց ընտանիքներն ունեն բազմաթիվ կարիքներ, մասնավորապես՝ սոցիալական, իրավական, ֆինանսական, հոգեբանական աջակցության:
- 2025 թ ապրիլի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում ընդունված չէ անհայտ կորածներին եւ նրանց ընտանիքների իրավունքներն ամփոփող համապարփակ օրենսդրություն[2], չնայած 2024 թվականի մայիսին Կառավարությունը հանձնառել է անհայտ կորածի մասին օրենքի ընդունումը:
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ անհայտ կորածի իրավական կարգավիճակի բացակայությունը ստիպում է նրանց հարազատներին դիմելու դատարան՝ իրենց հարազատին անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու համար՝ տարբեր ոլորտներում որոշ խնդիրներ լուծելու նպատակով, սակայն նույնիսկ նշված կարգավիճակները չեն

[2] «Անհայտ կորածի մասին» կամ «Ռազմական գործողությունների հետևանքով ստեղծված պայմաններում և հանգամանքներում անհայտ կորած անձանց մասին» օրենքի *(այսուհետ նաև՝ Օրենք)* նախագծի մշակման և օրենքի ընդունմանն ուղղված ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ջատագովությանն առավել մանրամասն կանդրադառնանք սույն զեկույցում

ապահովում անհայտ կորած անձանց եւ նրանց ընտանիքների իրավունքների եւ շահերի ամբողջական եւ լիարժեք պաշտպանությունը,

- Ոչ համակարգային եւ իրավիճակային մոտեցմամբ օրենսդրական մասնակի լուծումները վկայում են սոցիալական աջակցության տրամադրման հայեցողական մոտեցման մասին, որը չի կարող լինել համակարգային, քանի դեռ անհայտ կորածի ընտանիքին սոցիալական աջակցություն ապահովելու պետության պարտավորությունը սահմանված չէ օրենքով:
- Անհայտ կորած անձանց հարազատները հաճախ բանկային, ժառանգության ընդունման հետ կապված հարցերում ունենում են դժվարություններ, հատկապես այն հանգամանքներում, երբ անձը փաստացի մահացած չէ:

Անհայտ կորած անձանց միջազգային հանձնաժողովը (ICMP) իր 2024 թ. հրապարակած Հայաստանի վերաբերյալ տարեկան զեկույցում եւս արձանագրել է նշված եւ այլ խնդիրները:

«ԴԵՂԻՆ ԿԱԿԱՉՆԵՐ II» ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՀՔԱ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍՆԵՅԱԿԻ ԿՈՂՄԻՑ

2024 թ. մարտի 1-ից ՀՔԱ Վանաձորի գրասենյակը Միավորված Ազգերի Կազմակերպության[3] (*այսուհետ նաև՝ ՄԱԿ)* ֆինանսական աջակցությամբ նախաձեռնեց **«Դեղին կակաչներ II»** ծրագիրը, որի շրջանակներում անհայտ կորած անձանց ընտանիքներին տրամադրվեց իրավական եւ հոգեբանական աջակցություն:

Նշենք, որ դեռեւս 2004 թ. ՀՔԱ Վանաձորի գրասենյակը Կարմիր Խաչի Միջազգային Կոմիտեի տեղական գրասենյակների հետ սերտ

[3] ՄԱԿ խոշտանգման զոհերի կամավորական հիմնադրամ / he United Nations Voluntary Fund for Victims of Torture

համագործակցությամբ իրականացրեց «Դեղին Կակաչներ[4]» ծրագիրը, որի նպատակն էր Հարավային Կովկասի երկրների անհայտ կորած անձանց



իրավունքների ներդաշնակեցումը ազգային եւ միջազգային երկխոսության միջոցով, համապատասխան օրենքների ընդունումը, նախկին ռազմագերիների եւ պատանդների խնդիրների վերաբերյալ մարդասիրական ընկալման ձեւավորումը, անհայտ կորած անձանց հարազատներին կառավարությունների կողմից առավել լայն աջակցության ցուցաբերումը, անհայտ կորած անձանց խնդիրների շուրջ Հարավային Կովկասի կառավարությունների համագործակցության խթանումը, անձանց անհետացումների հանգամանքների վերաբերյալ առավել մեծ ծավալի տեղեկությունների ապահովումը: Ծրագրի շրջանակներում Կազմակերպությունն իրականացրեց հանրային իրազեկվածության բարձրացում անհայտ կորած անձանց իրավունքների վերաբերյալ, անհայտ կորած անձանց հարազատներին տրամադրեց իրավաբանական աջակցություն, նախաձեռնեց ազգային օրենսդրական մեխանիզմների ստեղծման աշխատանքներ, որը կապահովեր հարազատների իրավունքը՝ տեղեկություններ ստանալու անհայտ կորածների ճակատագրի եւ գտնվելու վայրի մասին:

Պետության կողմից մարդու իրավունքների հանդեպ վերցրած հանձնառությունների կատարման կարևոր ցուցանիշներից է՝ ինչպես է պետությունը վերաբերում անհայտ կորածների և նրանց հարազատների իրավունքներին:

2024 թվականին իրականացված «Դեղին կակաչներ II» ծրագրի շրջանակներում բացի անհայտ կորածների հարազատների հետ մշտական կապ

[4] https://archive.hcav.am/wp-content/uploads/2014/04/Yellow-Tulips.pdf

պահելուց և առանձին հանդիպումներից, երկու անգամ՝ 2024 թ ապրիլին և հուլիսին Կազմակերպությունը հանդիպել է 2020 թ . 44-օրյա պատերազմի հետեւանքով անհայտ կորած զինծառայողների հարազատների հետ:

Հանդիպումների ընթացքում անհայտ կորած զինծառայողների հարազատները ներկայացրել են տարբեր պետական կառույցների կողմից իրենց պարտավորությունների ոչ պատշաճ կատարմանն առնչվող բազմաթիվ և տարաբնույթ խնդիրներ ու մտահոգություններ:

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ԱՆՀԱՅՏ ԿՈՐԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՐԱԶԱՏՆԵՐԻՆ

Ծրագրի բաղադրիչներից էր նաև անհայտ կորած զինծառայողների հարազատներին հոգեբանական աջակցության տրամադրումը. 2020 թ. 44-օրյա պատերազմի հետեւանքով անհայտ կորած 15 զինծառայողների ընտանիքի անդամներ ուղղորդվեցին հոգեբանական աջակցության, ինչի արդյունքում զինծառայողների ընտանիքների հետ անհատական հոգեբանական թերապիա անցկացրած հոգեբանները տրամադրեցին նաև հոգեբանի մասնագիտական եզրակացություն նրանց հարազատների անհայտ կորչելու հետևանքով կրած հոգեբանական տառապանքների մասին, որը բնորոշվել է որպես «անորոշ կորուստ» և որակվել է որպես մարդկային արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք: Բացի այդ ևս 4 անհայտ կորած զինծառայողների ընտանիքներին, ինչպես նաև 2 նախկին ռազմագերիներին ու 5 պատերազմի նախկին մասնակից, ովքեր ի սկզբանե դիմել էին հոգեբաններին, ստացան հոգեբանական աջակցություն ծրագրի շրջանակներում:

Իրականացվել է 135 հոգեթերապևտիկ հանդիպում, այդ թվում՝

- 84 հանդիպում՝ անհայտ կորածների ընտանիքների թվով 19 անդամների հետ,
- 11 հանդիպում՝ 2 նախկին ռազմագերիների հետ,
- 40 հանդիպում՝ պատերազմի 5 նախկին մասնակիցների հետ:

Աշխատանքներն իրականացնելու համար ներգրավվել են 6 հոգեբան-հոգեթերապևտ, ովքեր, բացի վերականգնողական աշխատանքները, իրականացրել են նաև հետազոտական աշխատանքներ անհայտ կորած զինծառայողների հարազատների հետ:

Հոգեբանների թիմի կողմից հետազոտվել է անհայտ կորած զինծառայողների 15 հարազատ՝ տարբեր տարիքային խմբերի: Ճնշող մեծամասնությունը եղել են միջին տարիքի՝ 40-ից 55 տարեկան, սակայն եղել են նաև ավելի երիտասարդ և տարեց հետազոտվողներ:

Հետազոտության նպատակն էր պարզել անհայտ կորած զինծառայողների ընտանիքի անդամների հոգեբանական ընդհանուր վիճակը, և թե վերջիններիս հոգեկանի վրա ինչպիսի ազդեցություն է ունեցել հարազատի անհետ կորչելը:

Հետազոտման աշխատանքում որպես մեթոդներ օգտագործվել են կլինիկական զրույցը, դիտման մեթոդը և մասնագիտացված հոգեախտորոշիչ գործիքներ, ինչպիսիք են Համիլթոնի տագնապայնության և դեպրեսիվության սանդղակները:

Աշխատանքը տարվել է անհատական հանդիպումների ձևաչափով՝ երբեմն տնայցերով, երբ անձի ֆիզիկական վիճակը չէր թույլատրում հետազոտվողին գալ հոգեբանական կենտրոն:

Հետազոտության արդյունքները

Վերլուծությունը ցույց տվեց, որ գրեթե բոլոր հետազոտվողների մոտ առկա են բազմաշերտ, ծանր հոգեբանական և հոգեմարմնական խնդիրներ,

որոնք սերտորեն փոխկապակցված են անհայտ կորած հարազատ ունենալու փաստի հետ:

Հետազոտվողների մոտ հիմնական արտահայտված հոգեբանական խնդիրներն էին `

Տագնապայնության բարձր մակարդակ

Հետազոտվողների մոտ գերակշռում էր մշտական տագնապային լարվածություն, որը դրսևորվում էր՝

- սրտխփոցով
- շնչարգելությամբ
- կոկորդի սեղմվածությամբ
- թուլությամբ և մկանային լարվածությամբ:

Գրեթե բոլոր հետազոտվողները ապրում էին անվերջ սպասման տագնապ: Նրանց մտքում մշտապես ձեւավորվում էր անորոշ հարց. «Ի՞նչ է պատահել իմ հարազատի հետ: Կա՞ դեռ հույս, նա կվերադառնա՞»:

Հետտրավմատիկ սթրեսային խանգարման (PTSD) ախտանիշներ

Շատերի մոտ նկատվում էին հետտրավմատիկ սթրեսին բնորոշ դրսևորումներ՝

- մշտական կպչուն մտքեր
- տանջող հիշողություններ
- մղձավանջներ
- սթրեսային արձագանք անհայտ կորած հարազատին հիշելիս
- հանկարծակի վախի ալիքներ
- մտքերի և հիշողությունների անդադար կրկնություն

Դեպրեսիվ վիճակներ

Շատերի մոտ նկատվում էր՝

- կյանքի հանդեպ հետաքրքրության կորուստ
- գերհոգնածություն

- հուզական դատարկություն
- պարբերաբար լացի նոպաներ
- թուլություն, անգործունակություն
- թաքնված կամ բացահայտ հուսահատություն
- մեղքի զգացում, քանի որ իրենք շարունակում են ապրել:

Քնի խանգարումներ

Հետազոտվողների մոտ հաճախակի էին մակերեսային քունը, մղձավանջները, անընդհատ արթնացումները ամենափոքր ձայնից: Մղձավանջների բովանդակությունը հիմնականում կապված էր կորուստի կամ անհայտ կորած հարազատի որոնման անհաջողության հետ:

Հարկ է նշել նաև, որ `

Քնի խանգարումը խորացնում էր հոգեկան և ֆիզիկական հյուծվածությունը:

Հոգեսոմատիկ գանգատներ

Ուժեղ սթրեսը կամ երկարատև սթրեսային իրավիճակները, բացի հոգեբանական վիճակի վրա ազդելուց, հաճախ արտահայտվում են նաև հոգեմարմնական դրսևորումների տեսքով: Հետազոտվողների մոտ հիմնական հոգեմարմնական դրսևորումներն էին `

- սրտխփոց
- շնչարգելություն
- կրծքավանդակի ցավեր
- ստամոքսաաղիքային խանգարումներ
- գլխապտույտներ և գլխացավեր
- մկանային ցավեր
- կրծքավանդակի ցավ և կոկորդի սեղմվածություն:

Հուզական ինքնավերահսկման կորուստ

Հարազատները նշում էին հանկարծակի հուզական պոռթկումների՝ լացի, վախի, երբեմն էլ ագրեսիայի մասին: Մյուսները դրսևորում էին հուզական

կարկամում՝ ասես զգացմունքները քարացել էին: Որոշները հպարտանում էին իրենց հուզական չարտահայտման ունակությամբ, սակայն ակնհայտ էր, որ ներսում առկա էին տանջալի հույզեր:

Սոցիալական մեկուսացում

Հետազոտվողների զգալի մասը սկսել էր խուսափել մարդաշատ վայրերից, տոնական միջոցառումներից, նույնիսկ ընտանիքի և ընկերների հետ շփումից:

Հոգեբույժի և հոգեթերապևտի ներգրավման անհրաժեշտությունը

Հետազոտության արդյունքները վկայում են, որ հետազոտվողների ճնշող մեծամասնության համար անհրաժեշտ է հոգեբույժի հետ համակցված միջամտություն՝

- երկարաժամկետ հոգեթերապևտիկ աջակցություն,
- մասնագիտացված հոգեբուժական խորհրդատվություն ՀՏՍԽ-ի, դեպրեսիայի և այլ կլինիկական վիճակների ախտորոշման և բուժման նպատակով:

Հոգեթերապևտիկ միջամտությունները կարող են ապահովել հուզական փորձառությունների վերամշակում և սիմպտոմների մեղմացում, մինչդեռ հոգեբուժական միջամտությունը կարևոր է ֆիզիոլոգիական և ծանր հոգեմարմնական գանգատների արդյունավետ կառավարման համար:

Անորոշ կորուստ \ Անորոշության տրավմա

Հետազոտությունը բացահայտեց, որ այս մարդկանց հոգեկան ծանրության առանցքում անորոշության տրավման է: Սա այն վիճակն է, երբ կորստի փաստը չկա, բայց կորստի ցավը առկա է ամեն վայրկյան: Անորոշության տրավման առաջանում է այն ժամանակ, երբ մարդը կորցնում է իր հարազատին, բայց կորուստը հստակ հաստատված չէ: Չկա մարմին, չկա պատասխան:

Բացի անորոշության տրավմայի փաստը, հետազոտվողների հոգեկան վիճակի վատթարացմանը նպաստել են այնպիսի հանգամանքներ, որոնցից են ինքնուրույն իրենց հարազատներին փնտրելը, ինչը հաճախ իրականացվել է ադրբեջանական սոց. կայքերում տեղադրված տարբեր տեսահոլովակների ուսումնասիրությամբ, որոնց ընթացքում ցուցադրվել են հայ զինվորների դաժան սպանությունների, զրկանքների, կտտանքների և այլ անմարդկային վերաբերմունք պարունակող տարբեր տեսարաններ:

Անորոշության տրավման ունի հետևյալ ծանր ազդեցությունները՝

- Մարդը չի կարողանում անցնել սգի բնականոն փուլերով
- Մարդը սառչում է սպասման մեջ՝ չկարողանալով հրաժեշտ տալ, չկարողանալով ապրել:
- Մարդը ապրում է հույսի և հուսահատության մշտական պայքարի մեջ:
- Մարդու կյանքը դառնում է անորոշ, կիսատ, մշտապես կասկածի և վախի տակ:

Այս տրավմայի հետևանքով մարդիկ չեն կարողանում նոր ծրագրեր կազմել, չեն կարողանում սովորական կյանք վերադառնալ: Բառացիորեն ապրում են սառեցված ժամանակի մեջ:

Հարազատների զգացողությունը իրենց բնորոշմամբ՝

- Կյանքս կանգ է առել: Չեմ կարող առաջ շարժվել, քանի դեռ նա չի վերադարձել կամ չեմ իմացել ճշմարտությունը:
- Սա սովորական սուգ չէ:
- Սա անավարտ սուգ է: Եվ դա է, որ դարձնում է այս հոգեվիճակը, հատկապես ծանր և սպառիչ:

Եզրափակում

Հետազոտության արդյունքները փաստում են, որ անհայտ կորած զինծառայողների հարազատների կողմից տրված տեղեկությունների , ինչպես

նաև նրանց մոտ առկա վերը նկարագրված հոգեբանական դրսևորումների և իրենց հարազատի անհայտ կորած լինելու փաստի միջև առկա է համապատասխանության բարձր մակարդակ: Ինչը նշանակում է, որ նրանց մոտ առկա ծանր հոգեվիճակը մեծ հավանականությամբ պայմանավորված է իրենց հարազատի անհայտ կորած լինելու հանգամանքով:

Այսպիսով՝ անհայտ կորածների հարազատները հանդիսանում են հոգեբանական բարձր ռիսկային խումբ, ինչն էլ պահանջում է համալիր, երկարաժամկետ և համակարգված աջակցություն:

Անհրաժեշտ է՝

- Հոգեթերապևտիկ ծրագրված և անհատականացված միջամտություն,
- Հոգեբուժական մշտական վերահսկողություն,
- Սոցիալական և համայնքային աջակցության մեխանիզմների զարգացում:

Որպես կանոն, անհայտ կորած զինծառայողների հարազատների մոտ առկա է լարվածության, տագնապայնության բարձր մակարդակ, բարկության, դեպրեսիվ հոգեվիճակ, քնի խանգարում, փոփոխական տրամադրություն, ապատիկ վիճակ, անորոշ սպասում, անհանգիստ վիճակ, հույսի և հուսահատության իրար հաջորդող զգացողություններ, հոգեկան անկայունություն, որոնք ի հայտ են եկել զինծառայող հարազատի անհայտ կորչելուց հետո:

Անհայտ կորած անձանց հարազատների մոտ հոգեբանական նման վիճակի առկայության պայմաններում առաջանում են նաև ֆիզիկական առողջական խնդիրներ՝ սրտանոթային անբավարարության, նյարդային համակարգի և մի շարք այլ, այդ թվում քրոնիկ, հիվանդություններ, որոնք մի շարք դեպքերում հանգեցնում են անհայտ կորած անձանց հարազատների մահվան:

Հոգեբանների կողմից տրամադրված տեղեկանքները մյուս իրավաբանական նշանակության փաստաթղթերի հետ ներկայացվեցին ՄԱԿ-ի բռնի անհետացումների հարցերով աշխատանքային խմբին *(այսուհետ նաեւ՝ Խումբ)*:

ՄԱԿ-ի Բռնի անհետացումների հարցերով Աշխատանքային խմբի հիմնական խնդիրներից մեկը ընտանիքներին օգնելն է՝ պարզելու իրենց անհայտ կորած հարազատների ճակատագիրը կամ գտնվելու վայրը: Այդ մարդասիրական դերակատարմամբ Խումբը հանդես է գալիս որպես հաղորդակցության խողովակ՝ բռնի անհետացման զոհերի ընտանիքի անդամների, անհետացման դեպքերի մասին հաղորդող այլ աղբյուրների եւ համապատասխան կառավարությունների միջեւ:

Այս նպատակին հասնելու համար Խումբը՝

- ստանում, ուսումնասիրում եւ կառավարություններին է փոխանցում բռնի անհետացման վերաբերյալ հաղորդումներ, որոնք ներկայացվում են անհետացած անձանց հարազատների կամ նրանց անունից գործող մարդու իրավունքների կազմակերպությունների կողմից:
- պահանջում է կառավարություններից անցկացնել քննություններ եւ Խմբին տեղեկացնել արդյունքների մասին:
- պարբերաբար հետեւում է այդ տեղեկությունների պահանջներին:
- իրականացնում է կանխարգելիչ գործառույթ, աջակցելով պետություններին հաղթահարել այն խոչընդոտները, որոնք խանգարում են Բռնի անհետացումից անձանց պաշտպանության մասին Հռչակագրի իրագործմանը: Այս գործառույթը կատարվում է ինչպես երկիր այցելությունների ընթացքում, այնպես էլ խորհրդատվական ծառայություններ տրամադրելով՝ ըստ պահանջի:

Խմբի մանդատի վերջին երկարաձգման մասին որոշումն ընդունվել է Մարդու իրավունքների խորհրդի կողմից՝ 2023 թվականի հոկտեմբերին:

ՄԱԿ-ի պաշտոնական էջում անձանց բռնի անհետացման մասին Աշխատանքային խմբին զեկուցելու ընթացակարգի մասին տեղեկություններում

ներկայացված է նաեւ այդ գործընթացում քաղաքացիական հասարակության դերի մասին: Մասնավորապես նշվում է, որ *«Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները կարեւոր դեր ունեն Աշխատանքային խմբի մանդատի արդյունավետ գործունեության ապահովման մեջ: Դրանք կարող են բարձրացնել իրազեկվածությունը Աշխատանքային խմբի եւ նրա տարբեր ընթացակարգերի վերաբերյալ: Հասարակական կազմակերպությունները հաճախ օգնում են անհետացած անձանց հարազատներին՝ ներկայացնելու դեպքեր Աշխատանքային խմբին (WGEID) եւ հետեւելու հետագա թարմացումներին: Նրանք նաեւ կարող են Աշխատանքային խմբի ուշադրությանը ներկայացնել ընդհանուր բնույթի պնդումներ՝ կապված բռնի անհետացումների դեմ անձանց պաշտպանության մասին Հռչակագրի դրույթների հնարավոր խախտումների հետ: Բացի այդ, հասարակական կազմակերպությունները կարեւոր գործընկերներ են պետություններ այցելությունների ժամանակ՝ համակարգելով հանդիպումները Աշխատանքային խմբի եւ անհետացածների հարազատների միջեւ:»*

ՀՔԱ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԿՈՂՄԻՑ ՁԵՌՆԱՐԿՎԱԾ ԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՄԱԿ-Ի ԲՌՆԻ ԱՆՀԵՏԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

2020 թվականի 44-օրյա պատերազմի ընթացքում անհայտ կորած անձանց իրավունքների պաշտպանության իրավական մեխանիզմները գործարկելու նպատակով Կազմակերպության իրավաբանները 2024 թվականին նախօրոք մշակված փաստաթղթային բազայի օգնությամբ անհատական հանդիպումներ ունեցան ՀՀ տարբեր մարզերում բնակվող անհայտ կորած անձանց հարազատների հետ, հավաքագրեցին հարազատներին հայտնի փաստերը՝ անհայտ կորչելու հետ կապված, ստացավ նաեւ նրանց համաձայնությունը իրենց հարազատների իրավունքների պաշտպանության նպատակով միջազգային մարմիններին դիմելու համար: Անհայտ կորած անձանց հարցերով ամենահասանելի ու արդյունավետ իրավական պաշտպանության մեխանիզմը ՄԱԿ-ի բռնի անհետացումների հարցերով աշխատանքային խմբին համապատասխան դիմումներ ներկայացնելն էր: Դիմումներն ավելի ազդեցիկ դարձնելու համար 15 անհայտ կորած անձանց ընտանիքների անդամներ ուղղորդվեցին անհատական հոգեբանական աջակցության: Հոգեբանների ներգրավումը երկու հիմնական նպատակ էր հետապնդում. մի դեպքում անհայտ կորած անձանց հարազատների հոգեբանական տրավմաներն ու խնդիրները մեղմելը, մյուս դեպքում՝ անհայտ կորած անձանց հարազատների հոգեբանական



վիճակի ու տառապանքի արտացոլումը մասնագիտորեն եզրակացությամբ արտացոլելը, որը որպես հիմք կուղարկվեր ՄԱԿ-ի բռնի անհետացումների հարցերով աշխատանքային խմբին: Ընդհանուր առմամբ ՀՔԱՎ-ի իրավաբանները 60-ից ավելի հանդիպումներ են ունեցել անհայտ կորած անձանց հարազատների հետ, հավաքագրել են անհրաժեշտ տեղեկատվությունն այն անձանցից, ովքեր տվել են համաձայնություն ՄԱԿ նշված աշխատանքային խմբին դիմելու համար: Հանդիպումների աշխարհագրությունը ներառում էր ամբողջ ՀՀ ողջ տարածքը՝ բոլոր մարզերն ու Երեւան քաղաքը:



Անհատական հանդիպումների արդյունքում Կազմակերպությունը ՄԱԿ բռնի անհետացումների հարցերով աշխատանքային խմբին է ներկայացրել 53 դիմում: Ներկայացված բոլոր դիմումները Աշխատանքային խումբը ստացել է եւ այս տարվա ապրիլի սկզբին դրանցից չորսով Խումբը համապատասխան հարցադրումներ է ուղարկել Ադրբեջանին, նշելով անձանց անունները, հորդորել է տրամադրել տեղեկատվություն նրանց գտնվելու վայրի մասին:

Հատկանշական է այն հանգամանքը, որ թեեւ ՄԱԿ-ի բռնի անհետացումների հարցերով աշխատանքային խումբը դատական մարմին չէ, եւ նրա որոշումները հիմնականում խորհրդատվական բնույթ են կրում, սակայն իրավունքների պաշտպանության տեսանկյունից այն կարևոր ու արդյունավետ մեխանիզմ է, քանի որ բռնի անհետացումների ու բռնությամբ անհետացած անձանց մասին բացի համապատասխան որոշումներ կայացնելուց, Աշխատանքային խումբը այդ մասին հնարավորություն ունի արձանագրելու միջազգային զեկույցներում եւ ՀՔԱՎ-ը ու տեղական կազմակերպությունները հետագայում հնարավորություն կունենան մարդու իրավունքների վիճակի մասին զեկույցներ կազմելիս հղում կատարել ՄԱԿ-ի կողմից հրապարակված զեկույցներին:

Բացի այդ, իրավունքների պաշտպանության ցանկացած, հատկապես՝ միջազգային մեխանիզմ, կարեւոր հնարավորություն է արձանագրելու պատերազմական հանցագործությունները եւ դրանց կատարման մեղավորներին պատասխանատվության ենթարկվելու տեսակետից:

Կազմակերպությունն ամենօրյա իրավական խորհրդատվության շրջանակներում հիմնականում արձանագրել է երկու խումբ խնդիրներ. դրանցից առաջինը քրեական վարույթների շրջանակներում անհայտ կորած անձի՝ տուժողի կարգավիճակ չտրամադրելն է այն դեպքում, եթե ԴՆԹ նմուշառմամբ մարմինը կամ մարմնի մասերը չի նույնականացվել (մահացած անձի իրավահաջորդ հիմնականում ճանաչում են, մինչդեռ բավարար հիմքեր չկան, իրենց հարազատներին մահացած համարելու համար): Մյուս խմբի խնդիրները քաղաքացիաիրավական հարաբերություններում անհայտ կորած անձանց հարազատների իրավունքների իրականացումն է: Անհայտ կորած անձանց հարազատները հաճախ բանկային, ժառանգության ընդունման հետ կապված հարցերում ունենում են դժվարություններ, հատկապես այն հանգամանքներում, երբ անձը փաստացի մահացած չէ, չունի մահվան վկայական, սակայն բանկային հաշվին առկա գումարին հասանելիություն ունենալու նպատակով պահանջվում է ներկայացնել ժառանգության իրավունքի վկայական կամ վարկային պարտավորություններից բխող հարցերում որոշակի ապացուցողական նշանակության փաստաթղթեր են պահանջվում, որոնք փաստացի գոյություն չունեն:



Անհայտ կորած անձանց իրավունքների պաշտպանության տեսանկյունից լրջագույն խնդիրներից մեկը, որը ե՛ւ ներպետական ե՛ւ միջազգային մեխանիզմների կիրառման տեսանկյունից դժվարություններ էր առաջացնում, ոչ

բավարար տեղեկատվությունն է, ինչպես նաեւ առկա տեղեկատվության փաստարկված եւ որպես այդպիսին դրա վկայության չլինելը:

ՄԱԿ-ի Աշխատանքային խմբին դիմելիս դժվարություն էր առաջանում անհայտ կորած անձի բռնի անհետացած լինելու փաստի նկարագրումը, որովհետեւ նրանց հարազատները երբեմն ուղղակի տեղեկություններ չեն կարողանում հավաքագրել, քանի որ ողջ չեն մնացել այն անձինք, ովքեր հնարավոր է տիրապետեին որոշակի տեղեկությունների: Իսկ **<u>իրավունքի պաշտպանության ամենակարեւոր նախապայմաններից մեկը փաստերի հստակ շարադրանքի առկայությունն է:</u>**

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում տարիներ շարունակ առկա խնդիրները՝ կապված անհայտ կորած անձանց և նրանց ընտանիքների անդամների ու հարազատների իրավունքների պաշտպանության հետ, ՀՔԱ Վանաձորի գրասենյակը ներկայացնում է իր ուսումնասիրությունը՝ Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական Վեհաժողովի կողմից 2007 թվականի 1553 բանաձևի շրջանակներում Հարավային Կովկասի պետություններին, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությանը տրված հանձնարարականների կատարման վիճակի վերաբերյալ:

ԵԽԽՎ 2007 ԹՎԱԿԱՆԻ 1553 ԲԱՆԱՁԵՎԸ «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ, ԱԲԽԱԶԻԱՅԻ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՕՍԻԱՅԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ, ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ ԵՎ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԱՆՀԱՅՏ ԿՈՐԱԾՆԵՐԻ» ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՎ ԲԱՆԱՁԵՒԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՏՐՎԱԾ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

2007 թ. մարտի 7-ին Եվրոպայի խորհրդի Միգրացիայի, փախստականների եւ բնակչության հարցերով հանձնաժողովի զեկուցող Լեո Պլատվոյետը ներկայացրեց **«Լեռնային Ղարաբաղի, Աբխազիայի եւ Հարավային Օսիայի տարածաշրջանների հակամարտություններից Հայաստանում, Ադրբեջանում եւ Վրաստանում անհայտ կորածներ»** զեկույցը[5]:

2007 թ. մայիսի 24-ին Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովն (անյուհետ՝ ԵԽԽՎ կամ Վեհաժողով) ընդունեց 1553 բանաձեւը[6] Լեռնային Ղարաբաղի, Աբխազիայի եւ Հարավային Օսիայի տարածաշրջանների հակամարտությունների հետեւանքով Հայաստանում, Ադրբեջանում եւ Վրաստանում անհայտ կորածների հարցերի վերաբերյալ:



ԵԽԽՎ-ն իր 1553 բանաձեւում ընդգծելով, որ

[5] Missing persons in Armenia, Azerbaijan and Georgia from the conflicts over the Nagorno-Karabakh, Abkhazia and South Ossetia regions **Doc. 11196** 7 March 2007
[6] https://pace.coe.int/en/files/17541/html

1. Հայաստանում, Ադրբեջանում եւ Վրաստանում անհայտ կորածների խնդիրը շարունակում է ահռելի տառապանք պատճառել անհայտ կորածների ընտանիքներին եւ խթանում է լարվածության աճին տարածաշրջանում, խոչընդոտում է Լեռնային Ղարաբաղի, Աբխազիայի եւ Հարավային Օսիայի տարածաշրջանների շուրջ հակամարտությունների խաղաղ լուծում գտնելու ջանքերին (§1),

միաժամանակ շեշտվում է, որ

2. հակամարտության կամ ներքին բռնության իրավիճակում հայտնված կողմերը կրում են առաջնային պատասխանատվություն անհետացումները կանխելու, անհայտ կորածների ճակատագիրը պարզելու եւ ընտանիքների կարիքներին արձագանքելու համար (§2):

Պատերազմական գործողությունների ժամանակ գերիների ու անհայտ կորածների հարցերով գործում են միջազգային մարդասիրական նորմերը.

Ժնևյան Կոնվենցիայի 1977 թ. առաջին լրացուցիչ արձանագրության 33 և 34[7] հոդվածների համաձայն՝

«Երբ հանգամանքները թույլ տան և ամենաուշը ակտիվ ռազմական գործողությունների ավարտից հետո, հակամարտող կողմերից յուրաքանչյուրը պետք է փնտրի այն անձանց, ովքեր անհայտ կորած են հայտարարվել հակառակ կողմից»

Միաժամանակ Կոնվենցիայով[8] սահմանվում է, որ կողմերը պետք է ստեղծեն տեղեկատվական բյուրոներ, որոնք պետք է իրենց երկրի անհայտ կորած քաղաքացիների վերաբերյալ տեղեկատվություն հավաքագրեն եւ փոխանակեն այն միմյանց միջեւ, տեղեկություններ տրամադրեն անհայտ կորածների հարազատներին: Այս երկխոսության պահանջը բխում է պետությունների՝ իրենց քաղաքացիների հանդեպ պարտավորությունից:

3. Վեհաժողովն ընդգծեց նաեւ, որ **անհայտ կորած անձանց ճակատագիրն իմանալու իրավունքը վերջիններիս ընտանիքների**

[7] https://everycasualty.org/knowledge-base/geneva-conventions-provisions-for-missing-persons-and-remains/#:~:text=Additional%20Protocol%201%20of%20the%20Geneva%20Conventions%20contains,for%20the%20missing%20and%20the%20recording%20of%20deaths.

[8] https://www.eda.admin.ch/eda/en/home/foreign-policy/international-law/international-humanitarian-law/geneva-conventions.html , Geneva Conventions provisions for missing persons and remains - Every Casualty Counts

հիմնարար իրավունքն է եւ պետք է երաշխավորված լինի: Տեղեկատվություն ստանալու իրավունքն ամրագրված է միջազգային մարդասիրական իրավունքով: Ավելին, պետական պրակտիկան սահմանում է զինված հակամարտության յուրաքանչյուր կողմի պարտավորությունը որպես միջազգային սովորութային իրավունքի նորմ, որը կիրառելի է ինչպես միջազգային, այնպես էլ ոչ միջազգային զինված հակամարտություններում. պետք է ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները զինված հակամարտության արդյունքում անձանց անհայտ կորչելու համար մեղավորներին պատասխանատության ենթարկելու եւ անհայտ կորածների ընտանիքի անդամներին վերջիններիս վերաբերյալ ունեցած ցանկացած տեղեկություն տրամադրելու համար: Տեղեկատվություն ստանալու իրավունքը ամրագրվում է նաեւ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով (ETS No. 5) պաշտպանված իրավունքներով, մասնավորապես՝ 2, 3, 5, 8, 10 եւ 13 հոդվածներով (§ 7):



4. Միաժամանակ, Վեհաժողովը կոչ արեց հակամարտող կողմերին ընդունել եւ կիրառել միջազգային չափանիշներին համապատասխան ներպետական օրենսդրական դաշտ՝ զուգակցված անհրաժեշտ կարգավորող միջոցներով, որոնք վերաբերում են անհայտ կորած անձանց խնդրին եւ արտացոլում են համապատասխան միջազգային պարտավորությունները, կարգավորել համապատասխան ներպետական իրավական դաշտը՝ պարզաբանելու համար իրավական կարգավիճակը, որը կերաշխավորի բոլոր անհայտ կորածների շահերը եւ կնախատեսի համապատասխան իրավական եւ վարչական միջոցներ՝ ընտանիքի անդամների եւ խնամակալների իրավական եւ նյութական կարիքները բավարարելու համար՝ ընդգրկելով այնպիսի հարցեր, ինչպիսիք են անհայտ

կորածների երեխաների խնամակալությունը, ժառանգության իրավունքը, կրկին ամուսնանալու իրավունքը, կենսաթոշակային իրավունքը եւ հանրային օգնություն ստանալու իրավունքը (§ 11.10):

ԱՆՀԱՅՏ ԿՈՐԱԾԻ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀՔԱ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԱՎԵԼԻ ՔԱՆ ԵՐԿՈՒ ՏԱՍՆԱՄՅԱԿ ՏԵՎԱԾ ՁԱՏԱԳՈՎՈՒԹՅՈՒՆԸ

Անհայտ կորած անձանց եւ նրանց ընտանիքների իրավունքների՝ այդ թվում անհայտ կորած անձի ճակատագրի մասին տեղեկություններ ստանալու, նրա մահվան դեպքում աճյունը վերադարձնելու ընտանիքների իրավունքների ապահովման եւ մի շարք այլ իրավական խնդիրների լուծման անհրաժեշտությունը Հայաստանում առաջացավ 1990-ական թվականներին՝ ղարաբաղյան առաջին պատերազմի ընթացքում եւ դրանից հետո: ՀՔԱ Վանաձորի գրասենյակը հաշվի առնելով հակամարտության սրման մշտական վտանգը եւ դեռեւս ղարաբաղյան առաջին պատերազմից հետո Հայաստանի Հանրապետությունում եւ Լեռնային Ղարաբաղում հարյուրավոր անհայտ կորած անձանց եւ նրանց ընտանիքների՝ անհայտ կորած անձանց ճակատագիրն իմանալու իրավունքի խախտումը, ինչպես նաեւ բազմաթիվ այլ իրավական, սոցիալական, ֆինանսական, հոգեբանական եւ այլ խնդիրների համակողմանի լուծման հրատապությունը 2004 թ. նախաձեռնեց **«Անհայտ կորածի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաեւ՝ Օրենք)** նախագծի մշակման աշխատանքները պետական կառուցների՝ ՀՀ Ազգային ժողովի, ՀՀ նախագահի աշխակազմի, ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ ոստիկանության, ՀՀ ազգային անվտանգության ծառայության, ՀՀ առողջապահության նախարարության, ՀՀ աշխատանքի եւ սոցիալական ապահովության հարցերի նախարարության, ՀՀ

մարդու իրավունքների պաշտպանի, ինչպես նաեւ Կարմիր Խաչի Միջազգային Կոմիտեի ներկայացուցիչների հետ համատեղ:

Խմբի համար որպես աշխատանքային փաստաթուղթ հանդիսացավ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից մշակված Օրենքի նախագիծը եւ Կարմիր Խաչի Միջազգային Կոմիտեի կողմից մշակված անհայտ կորածների մասին մոդելային օրենքը:

Օրենքի նախագծի մշակման աշխատանքներն ավարտվեցին 2011 թվականին, եւ նախատեսվում էր, որ այն պետք է քննարկվեր միջգերատեսչական հանձնաժողովում՝ ՀՀ Ազգային ժողովի օրակարգում ներառելու նպատակով:

Չնայած կատարված աշխատանքին եւ մարտական գործողությունների վերսկսման բացահայտ վտանգին, **Օրենքի ընդունման անհրաժեշտությունը 13 տարի շարունակ ՀՀ պետական մարմինների կողմից համարվում էր ոչ նպատակահարմար:**

Մասնավորապես՝ **2015** թ. ՀՔԱ Վանաձորի գրասենյակը հարցմամբ դիմեց **ՀՀ արդարադատության նախարարություն՝** պարզելու թե ինչ փուլում են գտնվում «Անհայտ կորածի մասին» օրենքի նախագծի ուսումնասիրության հետ կապված աշխատանքները, եւ ստացավ պատասխան այն մասին, որ ***նախարարությունն օրենքի ընդունումը հրատապ չի համարում:***

2016 թ. քառօրյա պատերազմից հետո անհայտ կորած անձանց եւ նրանց ընտանիքների խնդիրները նորից արդիական դարձան: Հերթական անգամ Կազմակերպության կողմից բարձրաձայնվեց «Անհայտ կորածի մասին» օրենքի բացակայության բացասական ազդեցությունը:



2018 թ. ՀՀ-ում «Թավշյա, ոչ բռնի» հեղափոխությունից հետո նոր իշխանությունը եւս անմիջապես հետամուտ չեղավ խնդրի լուծման ուղղությամբ քայլեր ձեռնարկելուն:

Ի դեպ, ՀՀ Կառավարության 2019 թվականի

դեկտեմբերի 26-ի Ա 1978-Ա որոշմամբ[9] հաստատված՝ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022 եւ 2023-2025 թվականների գործողությունների ծրագրով սահմանվեցին Օրենքի ընդունման վերաբերյալ կարգավորումներ:

2020 թ. փետրվարի 19-ին ՀՔԱՎ-ի առաջարկով *Գերիների, պատանդների եւ անհայտ կորած անձանց հարցերով* զբաղվող միջգերատեսչական հանձնաժողովի նիստին հանձնաժողովի նախագահ, այն ժամանակ պաշտպանության նախարար Դավիթ Տոնոյանը համապատասխան գրությամբ դիմեց ՀՀ արդարադատության նախարարությանը՝ կրկին քննարկման օրակարգ վերադարձնելու Օրենքի նախագիծը:

2020 թ. մարտի 5-ին ՀՔԱ Վանաձորի գրասենյակը «Անհայտ կորածի մասին» օրենքն օրակարգ վերադարձնելու գործընթացի վերաբերյալ տեղեկատվության հարցմամբ դիմեց ՀՀ արդարադատության նախարար Ռուստամ Բադասյանին: Ի պատասխան ՀՀ արդարադատության նախարարությունը հայտնեց, որ 2020 թ. փետրվարի 19-ին կայացած նիստի արդյունքներով ՀՀ արդարադատության նախարարությունը համապատասխան գրություններ է ուղարկել ՀՀ պաշտպանության եւ արտաքին գործերի նախարարություններին՝ խնդրելով ներկայացնել վերջիններիս դիրքորոշումը 2011 թ. մշակված «Անհայտ կորած անձանց մասին» ՀՀ օրենքի նախագծի կամ ընդհանրապես նման նախագիծ շրջանառության մեջ դնելու նպատակահարմարության վերաբերյալ, հավելելով, որ համապատասխան դիրքորոշումները ստանալուց հետո լրացուցիչ կներկայացվի նախագծի հետագա ընթացքի վերաբերյալ տեղեկատվությունը:

Սակայն այդ ժամանակ եւս անհայտ կորածների ընտանիքների խնդիրների լուծման ուղղությամբ ՀՀ կառավարության կողմից բավարար միջոցներ չձեռնարկվեցին: Արդյունքում՝ 2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի սանձազերծած 44-օրյա պատերազմի ընթացքում ՀՀ կառավարությունը բախվեց նման անհետեւողական վարքագծի հետեւանքներին, երբ պատերազմի առաջին

[9] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=191790

իսկ օրերից անհայտ կորած զինծառայողների հարազատները չգիտեին՝ ուր դիմել իրենց զինծառայող հարազատների գտնվելու վայրի եւ ճակատագրի մասին որեւէ տեղեկություն ստանալու համար, չկար միասնական տեղեկատվական բազա եւ մեկ միասնական կառույց, որը կզբաղվեր անհայտ կորածների վերաբերյալ տվյալների հավաքագրմամբ եւ տեղեկություններ կփոխանցեր հարազատներին: Միայն պատերազմական գործողությունների մեկնարկից օրեր անց ստեղծվեց անհայտ կորածների հարցերով զբաղվող հանձնաժողով, որտեղ քաղաքացիները կարող էին դիմել: Մինչդեռ հանձնաժողովը ոչ թե ապահովում էր անհայտ կորած անձանց հարազատների տեղեկատվության ազատության իրավունքի իրացումը, այլ անհայտ կորած անձանց վերաբերյալ տվյալները հավաքագրում էր վերջիններիս հարազատներից եւ թարմացված տեղեկություններ ձեռք բերելու նպատակով պարբերաբար կապ հաստատում նրանց հետ:

Վկայակոչելով «Գերիների, պատանդների եւ անհայտ կորած անձանց հարցերով զբաղվող» հանձնաժողովի 2020 թ. փետրվարի 19-ի նիստին ՀՀ



արդարադատության նախարարության ներկայացուցչին ուղղված նույն հանձնաժողովի նախագահ Դավիթ Տոնոյանի դիմումը՝ 2010-2011 թթ. մշակված «Անհայտ կորածի մասին» օրենքի նախագիծը նորից քննարկման օրակարգ վերադարձնելու եւ ընթացք տալու վերաբերյալ, ՀՔԱ Վանաձորի գրասենյակը 2020 թ մարտին 5-ին դիմեց ՀՀ արդարադատության նախարարին՝ խնդրելով տեղեկություններ տրամադրել, թե ինչ քայլեր են իրականացվել այդ ուղղությամբ: Ի պատասխան, ՀՀ արդարադատության նախարարությունից հայտնեցին, որ Նախարարությունը գրություններ է ուղարկել ՀՀ պաշտպանության նախարարություն եւ ՀՀ արտաքին գործերի նախարարություն՝ խնդրելով ներկայացնել վերջիններիս

դիրքորոշումը օրենքի նախագծի կամ նման նախագիծ շրջանառության մեջ դնելու նպատակահարմարության վերաբերյալ:

2020 թ. դեկտեմբերի 14-ին ՀՔԱ Վանաձորի գրասենյակը հերթական տեղեկատվության հարցմամբ դիմեց ՀՀ արդարադատության նախարարին, խնդրելով տրամադրել տեղեկություններ այն մասին, թե արդյոք ՀՀ արդարադատության նախարարությունը մինչ այժմ ստացել է որեւէ դիրքորոշում ՀՀ պաշտպանության նախարարությունից եւ ՀՀ արտաքին գործերի նախարարությունից եւ ինչ քայլեր է իրականացրել օրենքի նախագիծը շրջանառության մեջ դնելու ուղղությամբ: Ի պատասխան ՀՀ արդարադատության նախարարությունից տեղեկացրեցին, որ «2020 թ. ապրիլի 6-ին եւ ապրիլի 30-ին ստացել են ՀՀ պաշտպանության եւ ՀՀ արտաքին գործերի նախարարությունների դիրքորոշումները, սակայն հաշվի առնելով 2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի սանձազերծած պատերազմի հետեւանքով ի հայտ եկած նոր իրողությունները՝ ՀՀ արդարադատության նախարարությունը եւս մեկ անգամ դիմել է ՀՀ պաշտպանության եւ ՀՀ արտաքին գործերի նախարարություններ՝ խնդրելով կրկին դիրքորոշում ներկայացնել»:

2021 թ. փետրվարի 8-ին ՀՀ արդարադատության նախարարությունը ՀՔԱ Վանաձորի գրասենյակին ներկայացրեց ՀՀ պաշտպանության նախարարության դիրքորոշումը «Անհայտ կորածի մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ: Տեղեկացվեց, որ ***ՀՀ ՊՆ-ն համարում է, որ ներկա փուլում օրենքի ընդունումը նպատակահարմար չէ,*** պատճառաբանելով իբրև ներկայացված հարաբերությունները գրեթե ամբողջովին կարգավորված են ՀՀ օրենսդրությամբ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման մասին» ՀՀ օրենքով, ՀՀ Կառավարության, ՀՀ վարչապետի որոշումներով եւ ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով:

ՀՀ արտաքին գործերի նախարարության դիրքորոշումը 2021 թ.-ին այն էր, որ «Անհայտ կորածի մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ ՀՀ ԱԳՆ-ն ***սկզբունքային առարկություններ չունի եւ դրա ընդունումը համարում է նպատակահարմար՝*** *«հաշվի առնելով 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ ադրբեջանաթուրքական ագրեսիայի արդյունքում ձեւավորված նոր իրադրությունը, ներկա մարտահրավերները, այդ թվում՝ անհայտ կորած անձանց եւ նրանց ազգականների իրավունքների եւ շահերի պաշտպանության հրամայականը»:*

ՀՀ արդարադատության նախարարությունը, հաշվի առնելով ՀՀ ՊՆ-ի «Անհայտ կորածի մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակման նպատակով իրավասու մարմին լինելու հանգամանքը եւ հիմք ընդունելով վերջինիս դիրքորոշումն առ այն, որ նախագծով ներկայացված հարաբերությունները «գրեթե ամբողջովին կարգավորված են», եւ առանձին օրենքի ընդունումը ներկա փուլում նպատակահարմար չէ, ***հայտնեց իր պատրաստակամությունը իրավասու մարմնի նախաձեռնությամբ հետագայում ըստ անհրաժեշտության համապատասխան օրինագծի մշակման աշխատանքներում ներգրավվելու հարցում***:



Ակնհայտ է, որ «Անհայտ կորածի մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումը ավելի քան 10 տարվա ընթացքում առաջին անգամ միայն 2021 թ-ին եւ միայն ՀՀ ԱԳՆ-ն համարեց նպատակահարմար: Սակայն, ցավոք, պետական կառույցները միանման չէին ընկալում «Անհայտ կորածի մասին» ՀՀ օրենքի ընդունման անհրաժեշտությունը:

2024 թ. Օրենքի հայեցակարգի ու նախագծի մշակման աշխատանքները վերսկսվեցին ՀՀ արդարադատության նախարարության համակարգմամբ: 2024

թվականի մայիսի 24-ին ՀՔԱ Վանաձորի գրասենյակի եւ Կարմիր Խաչի Միջազգային Կոմիտեի ներկայացուցիչների, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալի եւ աշխատակիցների մասնակցությամբ կայացած հանդիպման ընթացքում քննարկվեցին «Անհայտ կորած անձանց մասին» օրենքի հայեցակարգը, նպատակներն ու դրանց հասնելու ուղիները:

2024 թ. հոկտեմբերի 28-ին Կազմակերպությունը ստացավ ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակված «**Ռազմական գործողությունների հետեւանքով ստեղծված պայմաններում եւ հանգամանքներում անհայտ կորած անձանց մասին»** ՀՀ օրենքի նախագիծն ու հիմնավորումը, իսկ դեկտեմբերի 27-ին՝ օրենքի նախագծի լրամշակված տարբերակը՝ նախագծի վերաբերյալ Կազմակերպության կողմից առաջարկություններ ներկայացնելու նպատակով: 2025 թ. մարտի 10-ին Կազմակերպությունը ՀՀ արդարադատության նախարարությանը ներկայացվեց նախագծի վերաբերյալ դիտարկումներն ու առաջարկությունները:

2025 թ. մարտի 25-ին իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում հրապարակվեց «Ռազմական գործողությունների հետեւանքով ստեղծված պայմաններում եւ հանգամանքներում անհայտ կորած անձանց մասին» օրենքի նախագիծը[10], որում տեղ էին գտել նաեւ 2025 թ. մարտի 10-ին ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից ներկայացված առաջարկությունների մի մասը: Նախագիծը հանրային քննարկման դրվեց մինչեւ 2025 թ. ապրիլի 10-ը եւ Կազմակերպությունը վերստին ներկայացրեց իր առաջարկությունները[11], որոնց սույն զեկույցում առանձին կանդրադառնանք:

ՀՀ վարչապետի 2022 թվականի հոկտեմբերի 20-ի N 1236-Ա որոշմամբ[12] ստեղծված նոր «Գերիների, պատանդների եւ անհայտ կորած (գտնվելու վայրն անհայտ) անձանց հարցերով զբաղվող միջգերատեսչական հանձնաժողովի» (այսուհետ նաեւ՝ Հանձնաժողով), նախագահ եւ ՀՀ Ազգային անվտանգության

[10] https://www.e-draft.am/projects/8472
[11] https://hcav.am/20years-missing-persons/
[12] arlis.am/DocumentView.aspx?docid=170693

ծառայության տնօրենը ի պատասխան Կազմակերպության 2025 թ. հարցմանն այն մասին, թե ինչ քայլեր են ձեռնարկվել ԵԽԽՎ 1553 բանաձեւով ՀՀ-ին տրված հանձնարարականների կատարման ուղղությամբ, հայտնեց, որ Հանձնաժողովը ձեռնամուխ է եղել ՀՀ արդարադատության նախարարության կողմից համակարգվող «Անհայտ կորած անձանց մասին» օրենքի նախագծի մշակմանը: Մասնավորապես, տեղեկացվել է, որ 2022 թվականի դեկտեմբերի 16-ին միջգերատեսչական հանձնաժողովի հերթական նիստի ընթացքում ***կարեւորվեց գերիների, պատանդների եւ անհայտ կորած (գտնվելու վայրն անհայտ) անձանց վերաբերյալ հարցերի իրավական կարգավորման անհրաժեշտությունը եւ որոշվեց կոնկրետ քայլեր ձեռնարկել ՀՀ արդարադատության նախարարության համակարգմամբ համապատասխան օրենքի հայեցակարգի նախագծի մշակման ուղղությամբ***[13]**,** իսկ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությանը հանձնարարվել է իրականացնել գերիների, պատանդների եւ անհայտ կորած անձանց ընտանիքների կարիքների գնահատում:

1553 բանաձեւով ԵԽԽՎ-ն կողմերին կոչ է արել

5. ապահովել ամբողջական աջակցություն անհայտ կորածների խնդրի լուծման համար (§ 11.1),

6. ապահովել անհայտ կորածների հարցերով զբաղվող հանձնաժողովների ստեղծումն ու գործունեությունը եւ երաշխավորել դրանց ամենօրյա գործունեությունը համարժեք կառույցների միջոցով, ինչպիսիք են աշխատանքային խմբերը: Նման հանձնաժողովները եւ դրանց կից կառույցները պետք է ունենան օրենքով սահմանված հստակ մանդատ եւ անհրաժեշտ ռեսուրսներ եւ լիազորություններ, որպեսզի հնարավոր լինի՝ (§ 11.6)

[13] https://www.sns.am/hy/news/view/773 , https://www.sns.am/hy/news/view/763

- ***ակտիվորեն հավաքել, կենտրոնացնել եւ մշակել անհայտ կորած անձանց եւ նրանց վերաբերող իրադարձությունների, հուղարկավորման վայրերի վերաբերյալ բոլոր տեղեկությունները,***
- ***կազմակերպել, իրականացնել եւ վերահսկել անհայտ կորածների որոնողական աշխատանքները, ներառյալ մասունքների հայտնաբերումն ու նույնականացումը,***
- ***ընտանիքներին տեղեկացնել անհայտ կորածների խնդրի լուծման ուղղությամբ առաջընթացի մասին եւ աջակցել նրանց՝ ըստ վերջիններիս հատուկ կարիքների,***
- ***կապեր եւ աշխատանքային հարաբերություններ հաստատել գործընկեր հանձնաժողովների եւ աշխատանքային խմբերի հետ եւ միասին մշակել փոխըմբռնման համապատասխան հուշագրեր՝ նրանց աշխատանքը կանոնակարգելու համար,***
- ***անհրաժեշտության դեպքում հանձնաժողովների եւ դրանց կից կառույցների կազմում ներառել անհայտ կորածների ընտանիքների անդամներին,***
- ***ստեղծել բազմակողմ համակարգման մեխանիզմ հակամարտության համար, որը պետք է զբաղվի անհայտ կորածների ճակատագրի պարզաբանման գործընթացների սահմանմամբ եւ դրանց իրականացմամբ, մասնավորապես՝ մասունքների վերականգնման եւ նույնականացման գործընթացներով:***

Դեռեւս 2018 թ. ՀՀ կառավարության N 1535-Ա որոշմամբ ստեղծվեց գերիների, պատանդների եւ անհայտ կորած անձանց հարցերով զբաղվող միջգերատեսչական հանձնաժողով[14], որի նախագահն ի պաշտոնե ՀՀ պաշտպանության նախարարն էր: Այդ ժամանակ հանձնաժողովի գործունեության շրջանակներում գումարվում էին նիստեր, որոնց ընթացքում քննարկվում էին անհայտ կորած զինծառայողների ընտանիքներին դրամական աջակցության տրամադրման, հոգեբանական աջակցության ծրագրերի մշակման

[14] arlis.am/DocumentView.aspx?docid=126614

ու հոգեբանական վերականգնման համակարգերի ներդրման հարցերը, ինչպես նաեւ զոհված զինծառայողների դիերի ԴՆԹ վերլուծության միջոցով նույնականացման գործընթացն արագացնելու ուղիները[15]: Միաժամանակ հանձնաժողովի կողմից ընդգծվում էր ներգրավված գերատեսչությունների առավելագույնս արագ ու ճկուն գործելու անհրաժեշտությունը:

Ինչպես արդեն նշվեց, ՀՀ վարչապետի 2022 թվականի հոկտեմբերի 20-ի N 1236-Ա որոշմամբ[16] ստեղծվեց նոր «Գերիների, պատանդների եւ անհայտ կորած (գտնվելու վայրն անհայտ) անձանց հարցերով զբաղվող միջգերատեսչական հանձնաժողով» (այսուհետ նաեւ՝ Հանձնաժողով), հաստատվեց Հանձնաժողովի կազմը եւ աշխատակարգը, իսկ ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրենի 2022 թվականի նոյեմբերի 10-ի N 113-Ա հրամանով հաստատվեցին Հանձնաժողովի եւ դրան կից գործող աշխատանքային խմբի անհատական կազմերը:

Հանձնաժողովի ստեղծման նպատակն էր ապահովել տեղեկատվության տրամադրումը գերիների, պատանդների եւ անհայտ կորած անձանց հարազատներին: Անհայտ կորած անձանց ծնողներն ընդգծում են, որ 2020 թ պատերազմից հետո հինգ տարի անց անձամբ են քայլեր ձեռնարկում իրենց անհայտ կորած հարազատների գտնվելու վայրի եւ ճակատագրի մասին տեղեկություններ հայթայթելու համար՝ պատկան մարմինների ձեռնարկված գործողությունները որակելով անգործություն:

Ըստ ՀՀ ԱԱԾ կողմից 2025 թ. մարտի 4-ին Կազմակերպությանը տրամադրած տվյալների՝ «Հանձնաժողովի ստեղծման օրվանից տեղի է ունեցել Հանձնաժողովի 7 նիստ, որոնց շրջանակներում Հանձնաժողովի անդամներին տրվել են կոնկրետ հանձնարարականներ: Հանձնաժողովին կից գործող աշխատանքային խմբի կողմից իրականացվել են ընթացիկ աշխատանքներ, ապահովվել է ամենօրյա ռեժիմով համագործակցություն Հանձնաժողովի կազմում ընդգրկված պետական մարմինների ու կազմակերպությունների

[15] https://www.gov.am/am/news/item/14952/
[16] arlis.am/DocumentView.aspx?docid=170693

ներկայացուցիչների միջեւ: Կազմակերպվել են հանդիպումներ գերիների, պատանդների, անհայտ կորած, ինչպես նաեւ զոհված անձանց ծնողների եւ հարազատների հետ: Վերջիններից ստացվել են բազմաթիվ դիմումներ, որոնք ուսումնասիրվել եւ ամփոփվել են, ինչպես նաեւ առանձնացվել են հրատապ լուծումներ պահանջող խնդիրները, որոնց մի մասին տրվել են լուծումներ: ԱԱԾ կողմից տեղեկացվեց նաեւ, որ անհայտ կորածների ընտանիքների հետ մշտական կապը ապահովելու համար Ուլնեցի 56/5 հասցեում ՀՀ ՊՆ համապատասխան աշխատակիցները ծնողներից, հարազատներից ստացված դիմումները, առաջարկությունները հավաքագրում են եւ փոխանցում Հանձնաժողովին կից աշխատանքային խմբին: Դիմումների քննարկման կապակցությամբ, ըստ ԱԱԾ-ի, կազմակերպվել են առանձին հանդիպումներ, որոնց արդյունքներով դիմումները քննարկման նպատակով ուղարկվել են պետական իրավասու մարմիններին: Հավելվեց նաեւ, որ ամենօրյա ռեժիմով նույն հասցեում տեղի են ունեցել ծնողների խմբի եւ աշխատանքային խմբի անդամների հանդիպումներ: Բացի այդ, 2023 թ. փետրվարի 27-ին Հանձնաժողովի նախագահի նախաձեռնությամբ տեղի է ունեցել հանդիպում անհայտ կորած անձանց ընտանիքների 80-ից ավելի անդամների հետ: Հանձնաժողովին կից գործող աշխատանքային խումբը բացի ծնողների հետ հանդիպումներից, հանդիպումներ է ունեցել նաեւ Հայաստանում Կարմիր Խաչի Միջազգային Կոմիտեի պատվիրակության ներկայացուցիչների հետ:

Չնայած Հանձնաժողովի գործունեության մասին ՀՀ ԱԱԾ հայտնած տեղեկություններին, դեռեւս շարունակվում են անհայտ կորած կամ գերեվարված զինծառայողների ծնողների ու հարազատների բողոքի ակցիաները: Անհայտ կորածների հարզազատներն ունեն մի շարք չպարզաբանված հարցեր, որոնց լուծման ուղղությամբ փաստացի թե՛ ՀՀ կառավարությունը, թե՛ Հանձնաժողովը չեն ձեռնարկում արդյունավետ քայլեր:

Անհայտ կորածների վերաբերյալ ՄԱԿ-ի **Մարդու իրավունքների խորհրդի խորհրդատվական կոմիտեի** լավագույն փորձի զեկույցում[17] նշվում է, որ անկախ եւ անաչառ ազգային մարմինը կարող է առանցքային դեր խաղալ անհայտ կորածների ճակատագրի պարզաբանման գործում: Պետությունները պետք է ապահովեն նման հաստատության (անհայտ կորածների կոմիտեի կամ հանձնաժողովի) ստեղծումը եւ գործառնական գործունեությունը համապատասխան կառույցների միջոցով, ինչպիսիք են՝ աշխատանքային խմբերը կամ համապատասխան մեխանիզմները:

Անհրաժեշտ է, որ դրանք լինեն հնարավորինս ապաքաղաքականացված, իրենց աշխատանքը կատարեն բաց եւ թափանցիկ ձեւով, ու իրենց կազմում ընդգրկեն ոչ միայն պետական պաշտոնյաներին, այլ նաեւ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին, ինչպես նաեւ անհայտ կորածների հարազատներին, որպեսզի ապահովվի դրանց անկախությունը եւ արդյունավետությունը:

Միջազգային հարթակներում մշտապես ընդգծվել է անհայտ կորածների ընտանիքների արդյունավետ մասնակցության ապահովման խնդիրը ինչպես մեխանիզմի/կառույցի ստեղծման գործընթացին, այնպես էլ դրա գործունեության ընթացքում:

Նշենք, որ 2025 թ. մարտին «Ռազմական գործողությունների հետեւանքով ստեղծված պայմաններում եւ հանգամանքներում անհայտ կորած անձանց մասին» օրենքի նախագծում առաջարկվող փոփոխությունների թվում էր նաեւ *մեկ միասնական անկախ մարմնի՝ Անհայտ կորած անձանց հարցերով պետական կոմիտեի ձեւավորումը, որը կհամակարգի բոլոր գործընթացները՝ ապահովելով արդյունավետ աշխատանք տարբեր մարմինների եւ կազմակերպությունների միջեւ, ինչի փորձը առկա է մի շարք այլ պետություններում:* Կազմակերպության դիրքորոշման համաձայն՝

[17] https://missingpersons.icrc.org/library/report-best-practices-matter-missing-persons

- Անհայտ կորած անձանց հարցերով պետական կոմիտեն (Կոմիտե) պետք է գործի անհայտ կորած անձանց եւ նրանց հարազատների իրավունքների պաշտպանության, անկախության, քաղաքական չեզոքության, անկողմնակալության, ֆինանսական ինքնուրույնության, ֆունկցիոնալ անձեռնմխելիության, հանրային հաշվետվողականության եւ թափանցիկության, ինչպես նաեւ համագործակցության սկզբունքների հիման վրա:
- Կոմիտեն պետք է ունենա օրենքով հստակ սահմանված եւ միջազգային չափանիշներին համահունչ լիազորություններ, որոնք կապահովեն գործընթացների արդյունավետությունը, թափանցիկությունը եւ հաշվետվողականություն:
- Կոմիտեն պետք է լիազորված լինի ստանալու անհայտ կորած անձանց որոնման հարցումները, դրանց հիման վրա հավաքագրելու, ստուգելու եւ փոխանցելու անհայտ կորածների հարազատներին եւ իրավասու պետական մարմիններին անձի անհետացման վերաբերյալ առկա տեղեկությունները եւ փաստերը, ինչպես նաեւ տվյալներ անձի գտնվելու վայրի եւ ճակատագրի մասին:
- Կոմիտեն պետք է ունենա իրավասություն նաեւ քննելու անհայտ կորած անձանց անհետացման հետ կապված հանգամանքները: Միաժամանակ, Կոմիտեն պետք է համակարգի այլ մարմինների աշխատանքը՝ անհայտ կորածների որոնման, աճյունների նույնականացման եւ անհայտ կորած անձանց եւ նրանց հարազատների իրավունքների պաշտպանության հետ կապված բոլոր հարցերում: Կոմիտեն նաեւ պարտավոր է ապահովել, որ ձեռնարկվեն բոլոր անհրաժեշտ նախապատրաստական միջոցառումները Ազգային տեղեկատվական բյուրոյի ստեղծման եւ գործունեության համար, որը պատասխանատու կլինի տվյալների հավաքագրման եւ համակարգման գործընթացների համար՝

ապահովելով անհայտ կորած անձանց որոնման աշխատանքների շարունակականությունը:

- Կոմիտեն պետք է ունենա իրավասություն ճանաչելու անհայտ կորած անձին եւ իրականացնելու նրա անհայտ կորած լինելու կարգավիճակի պաշտոնական ճանաչման գործընթացը՝ համաձայն սահմանված ընթացակարգերի:
- Օրենսդրորեն պետք է ամրագրել, որ իրավասու մարմինները պարտավոր են տրամադրել Կոմիտեին բոլոր անհրաժեշտ տեղեկատվությունները, որոնք կապված են անհայտ կորած անձանց ճակատագրի եւ ինքնության որոշման հետ: Նման դեպքերում պետք է սահմանվեն նաեւ իրավական հետեւանքներ՝ այս պարտավորությունը չկատարելու համար, որպեսզի ապահովվի տեղեկատվության պատշաճ տրամադրումը ու գործընթացի արդյունավետությունը: Բացի այդ, Կոմիտեն պետք է ունենա հասանելիություն պետական հիմնարկների արխիվներին եւ պետական գաղտնիք պարունակող տեղեկատվությանը, որը անհրաժեշտ է անհայտ կորած անձանց գտնվելու վայրի եւ ճակատագրի պարզաբանման համար՝ օրենքով սահմանված պայմաններում եւ կարգով:
- Կոմիտեի անդամները պետք է ընտրվեն ՀՀ Ազգային ժողովի կողմից, քանի որ դա կարեւոր պայման է նրանց անկախության ապահովման համար: Անդամները պետք է ունենան անձեռնմխելիություն, որպեսզի կարողանան կատարել իրենց գործառույթները առանց քաղաքական կամ այլ ճնշումների ազդեցության:
- Կոմիտեի ենթակայության տակ պետք է ստեղծվի Ազգային տեղեկատվական կենտրոնը (բյուրոն), որը կլինի պատասխանատու անհայտ կորած անձանց վերաբերյալ տեղեկատվության հավաքման եւ համակարգման համար:

7. Անհայտ կորածների ընտանիքներին նյութական, սոցիալական եւ հոգեբանական աջակցություն տրամադրելու մասին ԵԽԽՎ կոչի (§ 11.11)

ուղղությամբ ՀՀ կառավարության կողմից ձեռնարկված քայլերի վերաբերյալ ՀՀ ԱԱԾ-ն տեղեկացրել է, որ «անհայտ կորած անձանց ընտանիքներին աջակցություն ցուցաբերելու նպատակով ՀՀ Կառավարության կողմից ընդունվել են նաեւ ամսական դրամական աջակցություն հատկացնելու, բժշկական օգնության եւ սպասարկման մասով արտոնություններ սահմանելու վերաբերյալ որոշումներ (03.12.2020թ. N 1924-L որոշում, 10.12.2020թ. N 2001-L, 24.12.2020թ. N 2180-Ա, 13.01.2022թ. N 64-Ա)»: Անհայտ կորածների խնդիրների հասցեագրումը գտնվում է նաեւ ՀՀ արտաքին գործերի նախարարության ուշադրության կենտրոնում՝ այն պարբերաբար բարձրացնելով միջազգային գործընկերների հետ թե՛ երկկողմ, եւ թե՛ բազմակողմ հարթակներում: Ըստ ՀՀ ԱԳՆ-ի՝ «ՀՀ արտաքին գործերի նախարարությունը եւս պարբերաբար հանդիպումներ է ունենում գերիների, անհայտ կորած եւ բռնի անհետացած անձանց հարազատների հետ: Առանձնակի ուշադրություն է դարձվում բռնի անհետացումների դեպքերին, որը վերաբերում է այն զինծառայողներին եւ քաղաքացիական անձանց, որոնց գերեվարման վերաբերյալ կան հստակ ապացույցներ՝ տեսագրությունների եւ վկայությունների տեսքով»:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի դիրքորոշումն այս հարցով այն է, որ անհայտ կորածների ցուցակը կազմելու եւ այլ, օրինակ՝ անհետացման հանգամանքների կամ հնարավոր հուղարկավորման վայրի մասին տեղեկություններ հավաքագրելու գործում կարեւոր դեր ունի անհայտ կորածների ընտանիքների ներգրավումը:[18] Անհայտ կորած անձանց որոնումը, նույնականացումը, նրանց ընտանիքների կարիքների բավարարումը եւ իրավաբանական կարգավիճակի որոշումը պահանջում են համապարփակ մոտեցում, որը ներառում է մի քանի ոլորտների համագործակցություն՝ իրավապահ համակարգ, զինված ուժեր, դատաբժշկական փորձագետներ, հասարակական եւ միջազգային կառույցներ:

[18] National Mechanisms for Missing Persons: A toolbox, էջ 58-59.

Ժնեւի 1949 թվականի կոնվենցիաներում սահմանվում է՝ տեղեկատվական բյուրոյի ստեղծման անհրաժեշտության մասին, որը կենտրոնացված կերպով հավաքագրելու է տեղեկատվություն հակառակորդ կողմին պատկանող ռազմագերիների եւ քաղաքացիական անձանց մասին, այդ տեղեկությունները փոխանցելու է մյուս կողմին եւ սկսելու է հետաքննություն՝ պարզելու անհայտ կորածների ճակատագիրը եւ գտնվելու վայրը[19]: Ժնեւի չորրորդ կոնվենցիայի 26-րդ հոդվածի համաձայն՝ հակամարտող կողմերը պարտավորվում են նպաստել անհայտ կորած հարազատների որոնմանը:

8. Վեհաժողովը կողմերին 1553 բանաձեւով կոչ է արել նաեւ՝ **հավաքել, կառավարել եւ պաշտպանել տվյալները, ինչպիսիք են մահվանը նախորդող ժամանահակատվածի վերաբերյալ տվյալները՝ անհայտ կորածներին հայտնաբերելու համար, ավարտին հասցնել մահվանը նախորդող իրադարձությունների վերաբերյալ տվյալների հավաքագրումը, հավելելով, որ նման տվյալներ հավաքագրողները պետք է անցնեն համապատասխան վերապատրաստում եւ ստանան հոգեբանական աջակցություն, տվյալներ տրամադրող ընտանիքի անդամները եւս պետք է ապահովվեն հոգեբանական աջակցությամբ: (§ 11.8)**

Ըստ ՀՀ ԱԱԾ-ի կողմից Կազմակերպությանը տրամադրած տեղեկատվության՝ «ՀՀ քննչական կոմիտեում Ադրբեջանի Հանրապետության կողմից 2020 թ. սանձազերծած պատերազմի եւ դրանից հետո իրականացված մյուս ագրեսիաների, Լեռնային Ղարաբաղի բնակչության նկատմամբ իրականացված էթնիկ զտման փաստերով նախաձեռնվել են քրեական վարույթներ, որոնց շրջանակներում քննության առարկա են դարձել նաեւ յուրաքանչյուր անձի անհայտ կորչելու հանգամանքները՝ իրացնելով նաեւ վերը նշված գործողությունները: Անհայտ կորած անձանց հարազատներն ունեն տուժողի դատավարական կարգավիճակ եւ հնարավորություն՝ ծանոթանալու քրեական վարույթի նյութերին»: Մինչդեռ անհայտ կորած զինծառայողների

[19] Ժնևի երրորդ կոնվենցիայի 122-րդ հոդված; Ժնևի չորրորդ կոնվենցիայի 136-րդ հոդված; 16-17-րդ հոդվածները Ժնևի առաջին կոնվենցիա, Ժնևի երկրորդ կոնվենցիայի 19-րդ հոդված.

հարազատները պնդում են, որ սահմանափակված է անհայտ կորածների ընտանիքներին տրվող տեղեկատվությունը և վերջիններիս մասնակցությունը քրեական վարույթների, իրականացված քննչական գործողությունների ընթացքին: Բացի այդ, անհայտ կորած զինծառայողների հարազատների տվյալներով՝ 44-օրյա պատերազմի ընթացքում զորամասերի տարածքներում տեղադրված տեսախցիկների ձայնագրությունները պահվում են ՀՀ պաշտպանության նախարարությունում, ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում, ՀՀ քննչական կոմիտեում, ՀՀ ռազմական ոստիկանության համապատասխան բաժիններում: Զինծառայողների ծնողներից որոշները նշում են, որ հնարավորություն են ունեցել ՀՀ պաշտպանության նախարարությունում դիտել հատվածներ այդ տեսագրություններից: Ծնողները դժգոհում են, որ չունեն ամբողջական հասանելիություն տեսագրություններին, ինչի պատճառով էլ չեն կարողանում պարզել, թե ինչ է իրականում տեղի ունեցել իրենց զինծառայողների հետ:

ԱԱԾ-ն հավելել է, որ մահվանը նախորդող իրադարձությունների վերաբերյալ տվյալների հավաքագրումն իրականացվում է ինչպես ՀՀ քննչական կոմիտեի կողմից նախաձեռնված քրեական վարույթների ընթացքում, այնպես էլ Հանձնաժողովի կողմից՝ ԱԱԾ-ի գործառույթների շրջանակներում: Չնայած ՀՀ ԱԱԾ նշված պնդումներին, անհայտ կորած զինծառայողների հարազատները վստահեցնում են, որ քննչական մարմինները հստակ չեն տիրապետում յուրաքանչյուր զինծառայողի «հետագծին»՝ անհայտ կորչելուց առաջ իրադարձություններին ու զինծառայողի շարժին, ինչը չափազանց կարեւոր է անհայտ կորած անձանց գտնվելու վայրի վերաբերյալ տեղեկությունների հայթայթման գործում: Անհայտ կորածների հարազատների համար խնդրահարույց է նաեւ այն փաստը, որ յուրաքանչյուր անհայտ կորած զինծառայողի անհայտ կորչելու հանգամանքների ուսումնասիրության գործով ներգրավված չէ առանձին քննիչ, որպիսի պարագայում գործի քննությունն առավել արդյունավետ ու արագ կընթանար:



ՀՔԱ Վանաձորի գրասենյակի դիտարկմամբ՝ անհայտ կորած անձանց անհետացման հետ կապված հանգամանքները քննելու իրավասությունը կրկին պետք է վերապահվի անհայտ կորած անձանց հարցերով պետական կոմիտեին, որը միաժամանակ կհամակարգի այլ մարմինների աշխատանքը՝ անհայտ կորածների որոնման, աճյունների նույնականացման եւ անհայտ կորած անձանց եւ նրանց հարազատների իրավունքների պաշտպանության հետ կապված բոլոր հարցերում: Կոմիտեն նաեւ պարտավոր է ապահովել, որ ձեռնարկվեն բոլոր անհրաժեշտ նախապատրաստական միջոցառումները Ազգային տեղեկատվական բյուրոյի ստեղծման եւ գործունեության համար, որը պատասխանատու կլինի տվյալների հավաքագրման եւ համակարգման գործընթացների համար՝ ապահովելով անհայտ կորած անձանց որոնման աշխատանքների շարունակականությունը:

Ինչ վերաբերում է անհայտ կորած անձանց ընտանիքներին տրամադրվող հոգեբանական աջակցությանը, ապա ՀՀ ԱԱԾ-ի կողմից ի պատասխան Կազմակերպության հարցմանը չի տրամադրվել տեղեկատվություն: Անհայտ կորածների հարազատներին հոգեբանական աջակցություն է տրամադրվում ԿԽՄԿ հայաստանյան ներկայացուցչության կողմից[20]: Նշենք, որ 2024 թվականի ընթացքում ՀՔԱ Վանաձորի գրասենյակը ՄԱԿ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրի շրջանակներում շուրջ երկու տասնյակ անհայտ կորած անձանց ընտանիքների անդամներին ուղղորդել է հոգեբանական աջակցության[21]:

Անհայտ կորած անձանց հարազատներին հոգեբանական աջակցության տրամադրումը պետք է լինի պետության առաջնահերթություններից մեկը, քանի որ ըստ վերջիններիս հարազատների՝ անհայտ կորած զինծառայողների

[20] https://medialab.am/287950/
[21] Ծրագրին անդրադարձ կատարվել է սույն զեկույցի Նախաբանում

հարազատներն ինքնասպանություն են գործել կամ ինքնասպանության փորձ են կատարել:

9. ԵԽԽՎ կողմից ընդունված բանաձեւում նշվում է նաեւ, որ **անհայտ կորածների հարցը մարդասիրական խնդիր է՝ մարդու իրավունքների եւ միջազգային մարդասիրական իրավունքի կիրառմամբ: Այն չպետք է դիտարկվի որպես քաղաքական հարց եւ հետեւաբար չպետք է կախված լինի տարածաշրջանում առկա վեճերի քաղաքական լուծումից: (§ 3)**

Չնայած սրան, Ադրբեջանը 2020 թ. պատերազմից հետո խախտում է միջազգային մարդասիրական իրավունքը՝ սահմանափակելով հակամարտության հետեւանքով Հայաստանից անհայտ կորած զինծառայողների եւ քաղաքացիական անձանց վերաբերյալ ամբողջական տեղեկությունների տրամադրումը: Բացի այդ, 2020 թ. պատերազմից հետո Ադրբեջանը Հայաստանի որոնողական խմբերի համար բավարար հասանելիություն չէր ապահովում այն վայրեր, որտեղ կարող են գտնվել անհայտ կորած անձանց աճյուններ կամ զանգվածային գերեզմաններ[22]:

10. Միաժամանակ **Վեհաժողովը 1553 բանաձեւով կոչ է անում կողմերին Կարմիր Խաչի Միջազգային Կոմիտեի (ԿԽՄԿ) եւ հակամարտող մյուս կողմերի հետ համաձայնեցնել անհայտ կորածների ամբողջական ցուցակները. (§ 11.5)**

Ըստ ՀՀ ԱԱԾ-ի կողմից Կազմակերպությանը տրամադրած տվյալների՝ Հայաստանի Հանրապետությունը սերտորեն համագործակցում է ԿԽՄԿ հայաստանյան պատվիրակության Երեւանի գրասենյակի հետ՝ անհայտ կորածների վերաբերյալ տեղեկությունների ճշգրտման եւ փոխանակման ուղղությամբ. հանդիպումներ են տեղի ունեցել նաեւ Հայաստանում Կարմիր Խաչի Միջազգային Կոմիտեի պատվիրակության ներկայացուցիչների հետ: ԱԱԾ-ն հավելել է, որ բացի այդ, ՀՀ արտաքին գործերի նախարարությունը ամենօրյա կապ է պահպանում եւ պարբերաբար հանդիպումներ ունենում միջազգային մի

[22] Խոսքն Արցախի/ Լեռնային Ղարաբաղի այն տարածքների մասին է, որոնք մինչև 2020 թվականի պատերազմը գտնվել են հայկական, իսկ այժմ՝ Ադրբեջանի վերահսկողության տակ

շարք կառույցների, այդ թվում՝ Կարմիր Խաչի Միջազգային Կոմիտեի հայաստանյան պատվիրակության հետ: Աշխատանքներ են իրականացվում հումանիտար խնդիրներով զբաղվող միջազգային կարեւոր կառույցների հետ, այդ թվում՝ ՄԱԿ փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի (UNHCR), Կարմիր Խաչի Միջազգային Կոմիտեի (ICRC), Անհայտ կորածների հարցերով միջազգային հանձնաժողովի (ICMP) հետ, ինչպես նաեւ խնդիրը ներկայացվել է միջազգային բարձր հարթակներում (ԱԱԿ Գլխավոր ասամբլեա, Մարդու իրավունքների խորհուրդ, ԿԽՄԿ 34-րդ համաժողով, Փախստականների հարցերով գործադիր կոմիտե եւ այլն): Ըստ ԱԱԾ-ի՝ ներկայումս ընթացքի մեջ է նաեւ Անհայտ կորածների համաշխարհային դաշինքին Հայաստանի միանալու գործընթացը:

11. Վեհաժողովը ճանաչում է ԿԽՄԿ-ի առանցքային դերը տարածաշրջանում հակամարտող կողմերի հետ աշխատելու, անհայտ կորածների խնդրի լուծման հարցում նրանց աջակցելու գործում: Վեհաժողովը խրախուսում է ԿԽՄԿ-ին շարունակել իր կարեւոր աշխատանքը այս ոլորտում: (§ 26)

Ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա պետք է ընդգծել, որ ինչպես մի շարք այլ դեպքերում, երբ, օրինակ 2023 թ. սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղի բռնի էթնիկ զտումից առաջ Ադրբեջանն արգելափակեց ԿԽՄԿ ներկայացուցիչների մուտքը Լեռնային Ղարաբաղ՝ Լաչինի միջանցքով մարդասիրական օգնության տեղափոխման համար, Ադրբեջանը մշտապես խախտում է միջազգային մարդասիրական իրավունքի դրույթները՝ ընդհուպ մինչեւ անտեսելով եւ չկատարելով ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանի պահանջները: Օրինակ՝ 2023 թվականի փետրվարի 22-ին ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանը պահանջեց Ադրբեջանին ձեռնարկել հնարավոր բոլոր միջոցները՝ ապահովելու մարդկանց, տրանսպորտային միջոցների երկու ուղղություններով անխոչընդոտ տեղաշարժը Լաչինի միջանցքով: Այնուամենայնիվ, չնայած Դատարանի որոշմանը, որը

հաստատել էր Լեռնային Ղարաբաղի բնակչությանը պատճառված վնասի փաստը՝ Ադրբեջանի իշխանությունները չձեռնարկեցին ճանապարհը ապաշրջափակելու քայլեր:

Ադրբեջանն արգելափակում եւ սահմանափակում է անկախ հետաքննություններ իրականացնելուն կամ անհայտ կորածների խնդրի լուծմանն աջակցելուն ուղղված միջազգային մարդասիրական կազմակերպությունների, այդ թվում նաեւ Կարմիր Խաչի Միջազգային Կոմիտեի (ԿԽՄԿ) ջանքերն ու նախաձեռնությունները:

Ադրբեջանը արդյունավետ կերպով չի համագործակցում միջազգային կազմակերպությունների հետ՝ անհայտ կորածների ամբողջական ցուցակները հստակեցնելու եւ անհայտ կորած անձանց ճակատագրի մասին տեղեկություններ հայտնելու համար:

Ադրբեջանն օգտագործում է անհայտ կորածների հարցը որպես քաղաքական գործիք՝ իր համար առավել մեծ կարեւորություն ունեցող հարցերի շուրջ բանակցություններում լծակներ ձեռք բերելու համար: Նույնիսկ հումանիտար նկատառումներով միջազգային կազմակերպությունների միջոցով չհամագործակցելով Հայաստանի հետ՝ Ադրբեջանը ճնշում է գործադրում Հայաստանի վրա երկկողմ բանակցություններում կամ այլ քննարկումներում իր օրակարգն առաջ մղելու համար:

12. ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը՝ անդրադառնալով ԵԽԽ Վեհաժողովի **«անհայտ *կորածների հարցին որպես մարդասիրական եւ մարդու իրավունքների, այլ ոչ թե՝ քաղաքական խնդրի մոտենալու»* (§ 11.2)** վերաբերյալ կոչին հայտնել է, որ «Հայաստանի Հանրապետությունը տարբեր մակարդակներում ընդգծել է, որ անհայտ կորածների խնդիրը բացառապես մարդասիրական եւ մարդու իրավունքների հարց է, չպետք է քաղաքականացվի եւ այն պետք է լուծվի միջազգային մարդասիրական իրավունքի սկզբունքներին համապատասխան: ՀՀ-ի կողմից ընդգծվել է, որ

անհայտ կորածների ընտանիքները պետք է ունենան իրավական եւ սոցիալական աջակցություն՝ անկախ նրանց ազգային պատկանելությունից կամ հակամարտության բնույթից»:

13. Անդրադառնալով Վեհաժողովի **անհայտ *կորածների հարցով փոխադարձության հիման վրա գործելուց ձեռնպահ մնալու, այսինքն՝ տեղեկատվության փոխանակումը կամ այլ քայլեր ձեռնարկելը մյուս կողմից տեղեկատվության տրամադրմամբ կամ քայլեր ձեռնարկելով չպայմանավորելու* (§ 11.3)** վերաբերյալ կոչին ՀՀ ԱԱԾ-ն հայտնել է, որ «Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է այն մոտեցումը, որ անհայտ կորածների հարցը բացառապես մարդասիրական է եւ չպետք է կախված լինի փոխադարձությունից կամ քաղաքական պայմանավորվածություններից»: Միաժամանակ, վկայակոչելով Հայաստանի Հանրապետության քայլերն այդ ուղղությամբ, մասնավորապես՝ նշելով, որ 2020 թվականի նոյեմբերից ի վեր Ադրբեջանի Հանրապետությանն է փոխանցել 44-օրյա պատերազմում զոհված 51 ադրբեջանցիների մարմիններ, ինչպես նաեւ 90-ականներին զոհված շուրջ 50 անձանց մարմինների գտնվելու հնարավոր վայրերի մասին տեղագրական նյութեր: Հայաստանը խրախուսել է ԿԽՄԿ-ի մասնակցությունը որպես միջնորդ՝ ապահովելու, որ անհայտ կորածների վերաբերյալ տեղեկատվության փոխանակումն իրականացվի հումանիտար սկզբունքներով, այլ ոչ թե քաղաքական կամ փոխադարձության սկզբունքով:

14. **Վեհաժողովն *ընդգծել է, որ անհայտ կորածների խնդրի լուծումը կարող է նպաստել թշնամանքի, անվստահության եւ անհանդուրժողականության մակարդակի նվազմանը, տարածաշրջանի նկատմամբ վստահության ամրապնդմանը եւ տարածաշրջանային վեճերի լուծմանն ուղղված ջանքերի խթանմանը քաղաքական մակարդակում* (§ 4)*:***

15. Բացի այդ, Վեհաժողովը կոչ էր արել կողմերին **ամենաբարձր *մակարդակով հանրային դիրք գրավել՝ հօգուտ անհայտ կորածների հարցի լուծման եւ ձեռնպահ մնալ անհայտ կորածների վերաբերյալ***

հայտարարություններից, որոնք կարող են թշնամանք եւ ատելություն առաջացնել հակամարտության մյուս կողմերի նկատմամբ: **(§ 12.3)**

Այս առնչությամբ, ըստ ՀՀ ԱԱԾ-ի, «Հայաստանի Հանրապետության կողմից մշտապես ընդգծվում է անհայտ կորածների հարցի լուծման կարեւորությունը՝ զերծ մնալով թշնամանք ու ատելություն առաջացնող հայտարարություններից»:

Նշենք, որ Ադրբեջանում երկար տարիներ իրականացվում է հետեւողական հակահայկականության եւ հայատյացության քարոզչություն, որն ակնառու կերպով արտահայտվեց հատկապես Ադրբեջանի կողմից Արցախի/ Լեռնային Ղարաբաղի դեմ սանձազերծած պատերազմական հանցագործությունների, էթնիկ զտման իրականացման, մշակութային եւ կրոնական արժեք ներկայացնող կոթողների ոչնչացման միջոցով:



Գերեվարված անձանց տվյալների հստակեցումը, նրանց պահման վայրերի, առաջնային անհրաժեշտության իրերի, բուժօգնության տրամադրումն ու իրականացումը կարող են նվազեցնել հակամարտող կողմերի միջեւ առկա թշնամանքը, անվստահության եւ անհանդուրժողականության մակարդակը: Սակայն Ադրբեջանական իշխանությունները շարունակում են թողնել չլուծված հարցեր՝ կապված հայ գերիների, անհայտ կորածների եւ նրանց ընտանիքների համար կարեւոր տեղեկությունների տրամադրման կամ դրանց բացակայության հետ: Նման վարքագիծը միայն խորացնում է տարածաշրջանային լարվածությունը եւ խոչընդոտում է երկու երկրների միջեւ վստահության կառուցման ու խաղաղության հաստատման գործընթացին:

Կարեւոր է նաեւ միջազգային ուշադրությունը նշված հարցերի շուրջ հատկապես՝ Կարմիր Խաչի Միջազգային Կոմիտեի, ԵԱՀԿ-ի եւ ՄԱԿ-ի կողմից,

որոնք փորձում են միջնորդել բանակցություններում եւ ազդել հակամարտող կողմերի վրա՝ հստակեցնելու անհայտ կորածների ճակատագիրը եւ կազմակերպելու գերիների փոխանակում:

16. Վեհաժողովը 2007 թ. 1553 բանաձեւով Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատարին առաջարկել էր հետեւել տարածաշրջանում անհայտ կորածների խնդրին եւ օգտագործել իր ազդեցությունը՝ այդ հարցում տարածաշրջանային համագործակցությունը խթանելու համար: (§ 21) Միաժամանակ ԵԱՀԿ Մինսկի խմբի քննարկման գործող նախագահի անձնական ներկայացուցչին առաջարկել էր ապահովել, որ լիակատար աջակցություն ցուցաբերվի անհայտ կորածների խնդրի լուծմանը եւ այն դիտարկվի որպես մարդասիրական եւ մարդու իրավունքների, այլ ոչ թե քաղաքական խնդիր: (§ 24)

Մինչդեռ այս հարցում եւս Ադրբեջանի վարած քաղաքականությունն ուղղված է միայն սեփական քաղաքական շահերն առաջ մղելուն եւ սեփական օրակարգը Հայաստանի իշխանությունների թելադրելուն: Մասնավորապես, Ադրբեջանի բարձրաստիճան պաշտոնյանը, այդ թվում նաեւ նախագահ Ալիեւը բարձր ամբիոններից հանդես են գալիս ԵԱՀԿ Մինսկի խմբի լուծարման անհրաժեշտության վերաբերյալ հայտարարություններով՝ ԵԱՀԿ Մինսկի խումբը, Բարձր մակարդակի պլանավորման կոմիտեն, ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի ինստիտուտը եւ ԵԱՀԿ շրջանակներում գործող մի շարք մեխանիզմները որակելով որպես «անցյալի մասունքներ» եւ «բացարձակ չգործող կառույցներ» [23]:

Ադրբեջանը շարունակ նոր նախապայմաններ է առաջ քաշում Հայաստանին՝ բացի ԵԱՀԿ Մինսկի խմբի լուծարումը նաեւ ԵՄ քաղաքացիական դիտորդական առաքելության դադարեցումը, Հայաստանի Հանրապետության սահմանադրության փոփոխությունը, միմյանց նկատմամբ պահանջներից, այդ թվում նաեւ միջազգային դատական ատյաններում առաջադրված պահանջներից հրաժարվելը:

[23] https://hetq.am/hy/article/164390

2025 թ. ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն իր ֆեյսբուքյան էջում հրապարակեց[24] ՀՀ կառավարության դիրքորոշումը Ադրբեջանի ներկայացրած պահանջների վերաբերյալ, մասնավորապես նշելով, որ Ադրբեջանը նախ պետք է հրաժարվի «Արեւմտյան Ադրբեջանի» եւ այդ կարգի խոսույթներից: Միաժամանակ ՀՀ վարչապետը նշեց, որ տարածաշրջանում երկարատեւ կայունություն եւ խաղաղություն հաստատելու համար Հայաստանի Հանրապետությունն առաջարկում է մի շարք կարեւոր դրույթներ, որոնց թվում էր նաեւ «գտնվելու վայրն անհայտ համարվող անձանց ճակատագրի պարզաբանման խնդրի լուծման ուղղությամբ ամբողջ ինտենսիվությամբ աշխատելը», միաժամանակ համաձայնելով նաեւ «ԵԱՀԿ մինսկի խումբը լուծարման» Ադրբեջանի պահանջին:

ԵԽԽՎ 1553 բանաձեւով կողմերին տրված հանձնարարականներից է նաեւ՝

17. անհայտ կորածների հիշատակը պահելու համար հիշատակի գրքերի, անհայտ կորածների հուշարձանների եւ թանգարանների, անհայտ կորածների հիշատակի օրերի գաղափարի ներդրման ուղղությամբ միջոցների ձեռնարկումը: (§ 11.12)

Մեր ուսումնասիրությունների համաձայն ՀՀ կառավարության կողմից միջոցներ չեն ձեռնարկվել անհայտ կորածների հիշատակի գրքերի հրատարակման ուղղությամբ: Միայն անհայտ կորածների հարազատների, ընկերների կողմից անհայտ կորածների հիշատակը պահելու համար հրատարակվել են առանձին գրքեր եւ նկարահանվել են ֆիլմեր[25] կոնկրետ անհայտ կորած, մահացած զինծառայողների եւ պատերազմի մասին:

Ինչ վերաբերում է թանգարաններին, ապա 2004 թ հունիսի 29-ին Ստեփանակերտում կայացել է ղարաբաղյան առաջին պատերազմի ընթացքում անհայտ կորածների հուշարձանի բացումը: Նույն օրը ԼՂՀ-ի անհայտ կորած

[24] https://www.facebook.com/nikol.pashinyan/posts/pfbid02qP6j1xDtDbqpXGZbQchpghKNkSoA8UoHHBqXvHoFPbqSQ9mcivqYWvfQQhMzkphxl

[25] http://hollywoodreporter.com/movies/movie-news/war-documentary-1489-wins-best-film-at-idfa-2023-1235652396/#!

ազատամարտիկների հարազատների միության գրասենյակում կայացել է անհայտ կորածների թանգարանի բացումը[26]:

Ներկայումս Հայաստանում անհայտ կորած զինծառայողներին նվիրված թանգարաններ չկան[27]:

Անհայտ կորածների հիշատակի օրվա սահմանման վերաբերյալ, նշենք, որ 2010 թվականի դեկտեմբերի 21-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան օգոստոսի 30-ը հռչակեց բռնի անհետացման զոհերի միջազգային օր: Արդեն 15-րդ տարին՝ օգոստոսի 30-ին ամբողջ աշխարհում հնչում են կոչեր կառավարություններին՝ գործադրել բոլոր ջանքերը՝ անհայտ կորած անձանց խնդրի լուծմանը հասնելու համար: Միաժամամանակ բռնի անհետացման համար պատասխանատուներին կոչ է արվում զոհերի մասին տեղեկություններն անհապաղ հայտնել նրանց հարազատներին: Հայաստանում եւս անհայտ կորածների հարցերով զբաղվող կառույցներն, այդ թվում ԿԽՄԿ[28] հայաստանյան գրասենյակը, այդ օրը կազմակերպում են միջոցառումներ՝ նվիրված անհայտ կորածներին եւ բարձրաձայնում են անհայտ կորածների եւ նրանց ընտանիքների տարիներ շարունակվող խնդիրները, իսկ ՀՔԱ Վանաձորի գրասենյակը ամեն տարի օգոստոսի 30-ին հրապարակումներով անդրադառնում է անհայտ կորածների չլուծված խնդիրներին[29]: Հայաստանում սովորույթի ուժով անհայտ կորածների հիշատակի օրը նշվում է հունիսի 29-ին, սակայն մինչ օրս որպես այդպիսին օրենքով ամրագրված չէ անհայտ կորածների կամ բռնի անհատացման զոհերի հիշատակի օր:

18. Ինչ վերաբերում է Վեհաժողովի՝ **անհայտ կորածների ընտանիքների միջեւ շփումների, ներառյալ միջսահմանային շփումների հաստատմանը աջակցելու (§ 12.2)** կոչին, ապա նշենք, որ անհայտ կորած անձանց հարազատները գտնվում են մշտական կապի մեջ միմյանց հետ, ունեն միմյանց հետ հաղորդակցվելու եւ անհայտ կորածների վերաբերյալ ցանկացած

[26] https://armenpress.am/hy/article/177325
[27] https://military-museum.mus.am/am/?utm_source=chatgpt.com
[28] https://www.azatutyun.am/a/anhayt-koratsneri-yntanikneri-spaseliknery-karavaroutyounits-en-bakvi-het-banaktselou-mi-hnar-gtnen-tghanery-veradarnan/33099898.html
[29] https://hcav.am/internationaldayofthedisappeared-30-08-2023/ , https://hcav.am/missing-persons-day-30-08-2024/

հարցի վերաբերյալ միմյանց իրազեկելու համար ընդհանուր հարթակ: Մինչդեռ ՀՀ ԱԱԾ կողմից Կազմակերպությանը չեն տրամադվել տվյալներ անհայտ կորածների ընտանիքների միջսահմանային շփումների հաստատման վերաբերյալ եւ Կազմակերպությանը եւս հայտնի չեն միջսահմանային շփման նման դեպքերի մասին:

19. Վեհաժողովը նաեւ կոչ է անում Հայաստանին, Ադրբեջանին եւ Վրաստանին, ինչպես նաեւ Լեռնային Ղարաբաղի, Աբխազիայի եւ Հարավային Օսիայի շրջանների «վարչակազմերին»՝ աջակցություն ցուցաբերել քաղաքացիական հասարակության նախաձեռնություններին՝ ի նպաստ անհայտ կորածների ընտանիքների եւ անհայտ կորածների հիմնախնդրի լուծման հետ կապված անձանց: (§ 20.3)

Այս առնչությամբ ՀՀ ԱԱԾ-ն Կազմակերպության տեղեկատվության հարցմանն ի պատասխան հայտնեց, որ «Հանձնաժողովի անդամների կազմում ընդգրկված են նաեւ քաղաքացիական հասարակության հետեւյալ 3 կազմակերպությունները՝ «Մեծ Հայք», «Միջազգային եւ համեմատական իրավունքի կենտրոն» եւ «Իրավունքի եւ արդարության կենտրոն «Թաթոյան» հիմնադրամ»: Ըստ ԱԱԾ-ի՝ քաղաքացիական հասարակության դերակատարները եւս նպաստում են անհայտ կորածների գտնվելու վայրերը պարզելու, եւ իրականացվող մյուս գործընթացներին, շեշտելով, որ լայն գործունեություն է ծավալում նաեւ Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը:

20. Վեհաժողովը կոչ է անում ապահովել անհայտ կորածների հարցի խորհրդարանական վերահսկողությունը, մասնավորապես՝ սույն բանաձեւի բովանդակության քննարկման միջոցով: (§ 12.4)

Այս առնչությամբ ՀՀ ԱԱԾ-ն Կազմակերպության տեղեկատվության հարցմանն ի պատասխան հայտնեց, որ անհայտ կորածների խնդիրը գտնվում է նաեւ ՀՀ Ազգային ժողովի ուշադրության կենտրոնում: Մասնավորապես, 2024 թվականի դեկտեմբեր 28-ին անհայտ կորածների հարազատները հանդիպում են ունեցել Ազգային ժողովի նախագահի եւ Պաշտպանության եւ անվտանգության

հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի հետ, իսկ 2025 թվականի հունվարի 30-ին եւ մարտի 31-ին ՀՀ Ազգային ժողովում անհայտ կորած անձանց հարազատների, ինչպես նաեւ պետական տարբեր մարմինների ղեկավարների մասնակցությամբ անցկացվել է փակ քննարկում, որտեղ բարձրացվել են անհայտ կորածների հարազատներին հուզող հարցերը: Հունվարի 30-ին կայացած հանդիպմանը անհայտ կորած զինծառայողների ընտանիքների նախաձեռնությամբ ՀՀ ազգային ժողով են հրավիրվել նաեւ մի քանի հասարակական կազմակեւպությունների ներկակացուցիչներ, այդ թվում նաեւ՝ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ներկայացուցիչները՝ Կազմակերպության նախագահը եւ Պաշտպանության եւ անվտանգության բնագավառի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության բաժնի համակարգողը: Հանդիպման ընթացքում զեկույցով հանդես եկավ ՀՀ ԱԱԾ տնօրենը/ «Գերիների, պատանդների եւ անհայտ կորած (գտնվելու վայրն անհայտ) անձանց հարցերով զբաղվող միջգերատեսչական հանձնաժողովի» նախագահը, ով հակիրճ ներկայացրեց Հանձնաժողովի կողմից ձեռնարկված քայլերը՝ ընդգծելով, որ Ադրբեջանը որպես կանոն պատասխան չի տրամադրում Հանձնաժողովի կողմից ուղարկված հարցումներին:

21. ԵԽԽ Վեհաժողովը 1553 բանաձեւով որպես առաջնահերթություն կոչ է անում Հայաստանին նաեւ ապահովել աշխատանքային կապերի հաստատումը Ադրբեջանում գործող հանձնաժողովի հետ: (§ 11.6.4)

ՀՀ ԱԱԾ-ն Կազմակերպության տեղեկատվության հարցմանն ի պատասխան հայտնեց, որ Ադրբեջանում գործող համանման հանձնաժողովի հետ աշխատանքային կապի պահպանման ուղղությամբ տարվում է համապատասխան աշխատանք: Մասնավորապես, 2025թ. փետրվարի 7-ին Հայաստանի Հանրապետության եւ Ադրբեջանի Հանրապետության սահմանին տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության գերիների, պատանդների եւ անհայտ կորած (գտնվելու վայրն անհայտ) անձանց հարցերով զբաղվող

միջգերատեսչական հանձնաժողովի եւ Ադրբեջանի Հանրապետության ռազմագերիների, պատանդների եւ անհայտ կորած քաղաքացիների հարցերով պետական հանձնաժողովի հանդիպումը: Հանդիպման ընթացքում Կողմերը կարծիքներ են փոխանակել անհայտ կորած անձանց ճակատագրի պարզաբանման հարցերի վերաբերյալ եւ եկել համաձայնության, որ հանձնաժողովների միջեւ փոխադարձ համաձայնությամբ քննարկումները կշարունակվեն:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփենք անհայտ կորածների և նրանց հարազատների իրավունքերի պաշտպանության վիճակը Հայաստանի Հանրապետությունում.

1. Ողջունելով «Ռազմական գործողությունների հետեւանքով ստեղծված պայմաններում եւ հանգամանքներում անհայտ կորած անձանց մասին» ՀՀ օրենքի նախագծի հրապարակումը /2025 թ./՝ անհրաժեշտ ենք համարում ապահովել Օրենքի նախագծի քննարկումներում անհայտ կորածների հարազատների, շահագրգիռ կազմակերպությունների լայն և բովանդակային մասնակցությունը և Օրենքի ընդունումը հնարավորինս կարճ ժամկետում:

2. Հաշվի առնելով, որ անհայտ կորածների գտնվելու վայրի և ճակատագրի մասին նրանց հարազատների տեղեկություններ ստանալու իրավունքի ապահովումը նաև պայմանավորված է Ադրբեջանի համապատասխան մարմինների հետ համագործակցությամբ, ինչն էլ ներկայումս բացակայում է, գտնում ենք, որ մարդասիրական այս իրավունքի ապահովման կարևոր հնարավորություն է հանդիսանում միջազգային ատյաններում անհայտ կորածների գտնվելու վայրի և ճակատագրի մասին տեղեկությունների ձեռքբերման, որոնողական աշխատանքների անհրաժեշտության շարունակական, հետևողական ու ակտիվ ջանքերը, և դրանց միջոցով էլ Ադրբեջանի կողմից երկխոսության ձևավորման հասնելը:

3. Հաշվի առնելով ԴՆԹ նույնականացման հետ կապված խնդիրները՝ կարևոր է օրենքով սահմանված անհայտ կորածների հարցերով պետական անկախ մասնագիտացված մարմնի՝ պետական Կոմիտեի ձևավորումը և համապատասխան աշխատակազմի կարողությունների ձևավորումը՝ հարազատների հետ աշխատանքներ իրականացնելու նպատակով:

4. Գործադրել ջանքեր անհայտ կորածների հարազատներին հոգեբանական աջակցության տրամադրման ուղությամբ, քանի որ իրենց հարազատի անհայտ կորչելու հետևանքով վերջիններիս վիճակը գնահատվում է որպես արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք:

5. Ողջունելով անհայտ կորածների ընտանիքներին շարունակական ֆինանսական օգնության տրամադրումը՝ գտնում ենք, որ այն պետք է սահմանվի օրենքով և տրամադրվի մինչև անհայտ կորածի ճակատագրի վերաբերյալ տեղեկությունների ձեռքբերումը:

6. Բացառել անհայտ կորած անձի հարազատի՝ «անհայտ բացակայող» կարգավիճակի տրամադրումը դատարանի կողմից:

7. Քանի որ ԵԽԽՎ 1553 բանաձևն ընդունվել է 2007 թվականին և, հաշվի առնելով Ղարաբաղյան երկրորդ պատերազմի ընթացքում անհայտ կորածների հետ կապված խնդիրները, Հայաստանի Հանրապետությունը պետք է ջանքեր գործադրի ԵԽԽՎ կողմից նշված բանաձևով արձանագրված պարտավորությունների կատարման երկրորդ գնահատումն իրականացնելու համար: